- Համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման թույլտվության համար նախատեսված 1 430.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 1 399.0 հազար դրամ, որը

նախատեսվածից պակաս է 31.0 հազար դրամով, ինչը պայմանավորված է 1 օբյեկտի գործունեության դադարեցմամբ, կատարողականը կազմում է 97.8 տոկոս: 2019թ-ին 2018թ-ի համեմատությամբ ավել է 15.0 հազար դրամ:

- Համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի, վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար նախատեսված 1 396.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 1 456.0 հազար դրամ, որը 60.0 հազար դրամով ավել է նախատեսվածից, կամ, կատարողականը կազմում է 104.3 տոկոս: 2019 թ-ին 2018 թ-ի համեմատությամբ ավել է 86.7 հազար դրամ:
- Համայնքի տարածքում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար. նախատեսված 2 000.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 1 767.0 հազար դրամ, որը 233.0 հազար դրամով պակաս է նախատեսվածից, ինչը պայմանավորված է համայնքի տարածքում գործող գազալցակայաններից 1 օբյեկտի չվճարելով: Ենթարկվել է վարչական պատասխանատվության, վարչական ակտը բողոքարկվել է դատական կարգով ( գործը գտնվում է վարչական դատարանի վարույթում): Եվ ևս մեկ օբյեկտ գործունեություն է իրականացրել 10 ամիս: Կատարողականը կազմում է 88 տոկոս: 2019 թ-ին 2018 թ-ի համեմատությամբ պակաս է 133.0 հազար դրամ:
- Համայնքի տարածքում վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար 2019թ. և 2018թ. նախատեսվել և հավաքագրվել է 100.0 դրամ: Կատարողականը կազմել է 100 տոկոս:
- Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, նախատեսված 1 694.8.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 1 828.4 հազար դրամ, կատարողականը կազմում է 107.9 տոկոս: 2019 թ-ին 2018 թ-ի համեմատությամբ պակաս է 443.2 հազար դրամ, որը պայմանավորված է տնտեսվարող սուբյեկտների կողմից գովազդային վահանակների հեռացմամբ:
- Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար 2019թ. և 2018թ. նախատեսվել և հավաքագրվել է 50.0 հազար դրամ: Կատարողականը կազմել է 100 տոկոս:
- Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, նախատեսված 240.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 240,0 հազար դրամ, կատարողականը կազմում է 100 տոկոս: 2019 թ-ին 2018 թ-ի համեմատությամբ ավել է 30.0.0 հազար դրամ:
- Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար, նախատեսված 132.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 124.0 հազար դրամ, որը 8.0 հազար դրամով պակաս է նախատեսվածից, ինչը պայմանավորված է 2 փոքր օբյեկտների գործունեության դադարեցմամբ, կատարողականը կազմում է 93.9 տոկոս: 2019 թ-ին 2018 թ-ի համեմատությամբ պակաս է 26.5 հազար դրամ:



1.4. **Պետական տուրքեր** 2017-2021 թթ. ՀՀՀԾ-ով 2019 թ-ին կանխատեսվել է 6 200.0 հազար դրամ: 2019 թվականի բյուջեով նախատեսված 6 600.0 հազար դրամի դիմաց՝ փաստացի մուտքը կազմել է 6517.1 հազար դրամ, որը հնգամյա ծրագրի համեմատությամբ ավել է 400.0 հազար դրամով: 2019 թվականի բյուջեի փաստացի կատարողականը նախատեսվածից պակաս է 82.9 հազար դրամով, կամ կատարողականը կազմել է 98.7 տոկոս, , այդ թվում՝

- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար, նախատեսված 3 600.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 3 137.0 հազար դրամ, կատարողականը կազմել է 87.1 տոկոս: 2019 թ-ին 2018 թ-ի համեմատությամբ պակաս է մուտքագրվել 57.0 հազար դրամ:
- Նոտարական գործողությունների համար, նախատեսված 3 000.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 3 380.1 հազար դրամ կատարողականը կազմել է 112.7 տոկոս: 2019 թ-ին 2018 թ-ի համեմատությամբ պակաս է մուտքագրվել 1 350.2 հազար դրամ:

1.5. **Գույքի վարձակալություն** 2017-2021 թթ. ՀՀՀԾ-ով 2019 թ-ին կանխատեսվել է 6 900.0 հազար դրամ: 2019 թվականի բյուջեով նախատեսված 6 135.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 6 766.5 հազար դրամ, որը հնգամյա ծրագրի համեմատությամբ պակաս է 133.5 հազար դրամով: 2019 թվականի բյուջեով նախատեսվածից ավել է մուտքագրվել 631.5 հազար դրամ, որը պայմանավորված է ապառքների գանձումով: Բյուջեն գույքի վարձակալության մասով կատարվել է 110,3 տոկոսով: 2019 թ-ին 2018թ-ի համեմատությամբ ավել է 803.7 հազար դրամով:

1.6. **Վարչական գանձումներ** (համայնքի կողմից մատուցած ծառայություններ) 2017-2021 թթ. ՀՀՀԾ-ով 2019 թ-ին կանխատեսվել է 57 000 հազար դրամ: 2019 թվականի բյուջեով նախատեսված 39 039.9 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 46 283.5 հազար դրամ, որը հնգամյա ծրագրի համեմատությամբ պակաս է 10 716.5 հազար դրամով: 2019 թվականին նախատեսվածից բյուջե ավել է մուտքագրվել 7 244.6 հազար դրամ, կամ վարչական գանձումների մասով բյուջեն կատարվել է 118.6 տոկոսով, 2019 թ-ին 2018թ-ի համեմատությամբ ավել է 5 686.1 հազար դրամով, որից՝

- աղբահանության վճարներ նախատեսվել էր 19 930.9 հազար դրամ, փոխարենը հավաքագրվել է 21 252.2 հազար դրամ, որը 1 321.3 հազար դրամով ավել է նախատեսվածից ,ինչը պայմանավորված է ապառքների գանձումով, կատարողականը կազմել է 106.6 տոկոս: 2019թ-ին 2018թ-ի համեմատությամբ ավել է 3 546.9 հազար դրամ:
- ծնողական միջոցներ (մանկապարտեզներ, երաժշտական և գեղարվեստի դպրոցներ, մշակույթի տուն ) նախատեսվել էր 15 750.0 հազար դրամ, փաստացին կատարվել է 15 987.6 հազար դրամ, ավել է հավաքագրված 237.6 հազար դրամ, կատարողականը կազմում է 101.5 տոկոս:
- վարչական այլ գանձումներ - նախատեսված 2 800.0 հազար դրամի փոխարեն հավաքագրվել է 6 359.7 հազար դրամ, նախատեսվածից բյուջե ավել է մուտքագրվել 3 559.7

հազար դրամ, որը պայմանավորված է ապառքների գանձմամբ, կատարողականը կազմում է 227.1 տոկոս: 2019 թ-ին 2018 թ-ի համեմատությամբ ավել է 2 875.6 հազար դրամ:

- Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար նախատեսված 258.0 հազար դրամի փոխարեն հավաքագրվել է 2 684.0 հազար դրամ, նախատեսվածից բյուջե ավել է մուտքագրվել 2 426.0 հազար դրամ: 2019 թ-ին 2018 թ-ի համեմատությամբ ավել է 300.0 հազար դրամ:

- Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար նախատեսված 300.0 հազար դրամի փոխարեն հավաքագրվել է 379.9 հազար դրամ, նախատեսվածից բյուջե ավել է մուտքագրվել 79.9 հազար դրամ կատարողականը կազմում է 126.6 տոկոս: 2019թ-ին 2018թ-ի համեմատությամբ ավել է 262.9 հազար դրամ:

1.7. **Այլ հարկային եկամուտներ** (տույժեր և տուգանքներ) 2017-2021 թթ. ՀՀՀԾ-ով 2019 թ-ին կանխատեսվել է 1000.0 հազար դրամ: 2019 թվականի բյուջեով նախատեսված 100.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 820.0 հազար դրամ: 2019թ-ին 2018թ-ի համեմատությամբ ավել է 710.0 հազար դրամ

2- Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ 2017-2021 թթ. ՀՀՀԾ-ով 2019 թ-ին կանխատեսվել է 253 000.0 հազար դրամ: 2019 թվականի բյուջեով նախատեսված 261 767.2 հազար դրամի դիմաց հատկացվել է 261 767.2 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 100 տոկոս, 2019թ. 2018թ.-ի համեմատությամբ ավել է տրամադրվել 25 703.6 հազար դրամ:

3- Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) /երաժշտական դպրոցում ազգային, փողային և լարային նվագարանների գծով 22 սանի ուսուցման համար/ նախատեսվել է 5 854.3 հազար դրամ, հատկացվել է 5 854.3 հազար դրամ, փաստացի կատարվել է 100 տոկոս: 2019թ-ին 2018թ-ի համեմատությամբ ավել է 719.8 հազար դրամ:

4- Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորում /սուբվենցիա/ 21 474.5 հազ. դրամ, որից՝

Սպիտակ համայնքի Առափնյա և Պանրագործների թաղամասերում անձրևաջրատար առվի կառուցման, մայթերի եզրաքարերի ուղղման, մայթերի ասֆալտապատման (26 053.0 հազար դրամի աշխատանքների իրականացման) նպատակով հատկացվող նպատակային հատկացում (սուբվենցիա)՝ 13 026.5 հազար դրամ:

Սպիտակ համայնքի Տաշիր, Էստոնական, Ուզբեգական և Բանավան թաղամասերի փողոցային լուսավորության (15 360.0 հազար դրամի աշխատանքների իրականացման) համակարգերի կառուցման նպատակով հատկացվող նպատակային հատկացում (սուբվենցիա)՝ 8 448,0

հազար դրամ:

5- Տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար ՀՀ պետական բյուջեից քաղաքացիական կացության ակտերի գրանցման առանձնացված ստորաբաժանման համար 2019 թվականին

նախատեսվել է 5 354.1 հազար դրամ, փաստացի ֆինանսավորվել է 5 354.1 հազար դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100 տոկոսով: 2019թ-ին 2018թ-ի համեմատությամբ ավել է ֆինանսավորվել 42.7 հազար դրամ:

**-Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 56 832.4 հազար դրամ:**

Այդ թվում

վարչական մասով – 5 426.6 հազար դրամ:

Ֆոնդային մասով - 51 405.6, որից 25 165,0 հազար դրամը հատկացվել է պետ բյուջեից 2018 թ-ին սկսված սուբվենցիոն ծրագրերի կատարման համար, որից՝

. 6 774.2 հազար դրամ երաժշտական և գեղարվեստի դպրոցների հիմնանորոգման համար:

.18 440.2 հազար դրամ Սպիտակ համայնքի թիվ 2 ՆՈՒՀ և մշակույթի տուն ՀՈԱԿ-ների շենքերի տանիքների վրա 45 և 50 կվտ հզորությամբ արևային ֆոտոէլեկտրական համակարգերի կառուցման համար:

### **բ) Ծախսերի գծով՝**

2019թ-ի տարեկան բյուջեով նախատեսվել է 529 282.1 հազար դրամի ծախս, փաստացի դրամարկղային ծախսերը կազմել են 495 526,8 հազար դրամ, կամ ծախսերի մասով բյուջեն կատարվել է 93,6 տոկոսով, որից

#### 1.Վարչական բյուջեի ծախսեր

**ա)** Վարչական բյուջեի ծախսերը 2019թ-ի համար նախատեսված 400 720,0 հազար դրամի դիմաց կատարվել են 381 411,3 հազար դրամով, կամ կատարողականը կազմել է 95,2 տոկոս: 2019 թ-ին 2018 թ-ի համեմատությամբ ծախսը ավել է 24 172,1 հազար դրամով:

**•Ապարատի պահպանման ծախսեր՝** ընդհանուր նախատեսված 97 486,2 հազար դրամի դիմաց կատարվել են 91 140.9 հազար դրամ, նախատեսվածից պակաս է ծախսվել 6 345.3 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 93.5 տոկոս, 2019 թ-ին 2018թ-ի համեմատությամբ պակաս է ծախսվել 2 672.7 հազար դրամ,

**•աշխատավարձ և դրան հավասերացված վճարներ – 2019թ.** նախատեսվել է 75 255,0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 70 134,1 հազար դրամ, աշխատավարձի ֆոնդը տնտեսվել է 5 120,9 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 93.2 տոկոս: 2019թ-ին 2018թ-ի համեմատությամբ պակաս է ծախսվել 3 446.4 հազար դրամ, որը պայմանավորված է 2019-ին թափուր հաստիքների առկայությամբ:

-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ – 1 485.8 հազար դրամ: Պարգևատրվել են աշխատակազմի 11 աշխատակիցներ՝ աշխատանքային պարտականությունները բարեխիղճ և որակով կատարելու համար:

-Էներգետիկ ծառայություններ՝ 2019 թ. բյուջեով նախատեսվել է 9 217.2 հազար դրամ, փաստացի ծախսը կազմել է 9 017.0 հազար դրամ, կամ նախատեսվածից պակաս է ծախսվել 200.2 հազար դրամ: 2019 թ-ին 2018 թ.-ի համեմատությամբ ծախսը ավել է 793.9 հազար դրամով

-գազի և էլ. էներգիայի վճարներ – նախատեսվել է 4 988 3 հազար դրամ, կատարվել է 4 774.2 հազար դրամ, որից 700.4 հազար դրամ նախորդ տարվա պարտք: 2019 թ-ին

2018թ- ի համեմատությամբ ավել է ծախսվել 884.3 հազար դրամ, որը պայմանավորված է էներգետիկ այլ ծառայությունների ձեռք բերմամբ, որից՝

- 540.5 հազար դրամ ք. Սպիտակ Շահումյան 7 հասցեում գտնվող նոր կառուցվող կամ վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացնելու և սպառողին էլեկտրաէներգիա մատակարարելու նպատակով
- 55.0 հազար դրամ արևային ֆոտովոլտային կայանի արտադրած էներգիան էլեկտրական ցանցին փոխանցելու սարքավորում ձեռք բերելու նպատակով
- 53.0 հազար դրամ եռաֆազ հաշվիչի տեղադրման համար:

- Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի՝ համայնքի պայմանագրային պարտավորությունները կատարելու նպատակով ֆինանսավորվել է 4 242.8 հազար դրամ համաձայն ՀՀ Լոռու մարզի Սպիտակի քաղաքապետարանի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի միջև 09.04.2016թ-ին կնքված «էներգաղնայողության ծառայությունների մատուցման թիվ 58/2015» համաձայնագրի ժամանակացույցի:

- կապի և փոստային ծառայությունների վճարներ-1 257.2 հազար դրամ:
- ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ- 139.9 հազար դրամ:
- ապահովագրական ծախսեր- 97.0 հազար դրամ:
- արտագերատեսչական ծախսեր /պահակային ծառայություն/- 2 420.0 հազար դրամ
- գործուղման ծախսեր -538.2 հազար դրամ
- համակարգչային ծառայություններ /ՀԾ Հաշվապահ, Վեկտոր-Պլյուս, ՏՀԶՎԿ համակարգերի սպասարկման վճարներ/- 542.1 հազար դրամ
- աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ -18.0 հազար դրամ
- տեղեկատվական ծառայություններ – 721.7 հազար դրամ
- մասնագիտական ծառայություններ-106.8 հազար դրամ
- մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում – 308.5 հազար դրամ:
- գրասենյակային ապրանքների ձեռք բերում – 695.8 հազար դրամ:
- տրանսպորտային նյութեր՝ վառելիք և պահեստամասեր- 3 219.0 հազար դրամ:
- կենցաղային մաքրող նյութեր – 245.8 հազար դրամ:
- հատուկ նպատակային այլ նյութեր (տնտեսական ապրանքներ)– 151.0 հազար դրամ:
- պարտադիր վճարներ և այլ ծախսեր- 43.0 հազար դրամ:

### **-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ**

Նախատեսված 8 759.2 հազար դրամի դիմաց կատարվել է 8 121.3 հազար դրամ, նախատեսվածից պակաս է ծախսվել 637.9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 92.7 տոկոս, որից փաստացի ծախսերը.

- ՔԿԱԳ – 5 354.1 հազար դրամ,

- Այլ ծառայություններ – 2 767.2 հազար դրամ/ուսանողական ավտոբուսի վարձակալություն՝ վարորդի հետ միասին  
2018թ- ի համեմատությամբ պակաս է ծախսվել 215.1 հազար դրամ,

**-Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ**

Նախատեսված 4 540.0 հազար դրամի դիմաց կատարվել են 4007.9 հազար դրամ, նախատեսվածից պակաս է ծախսվել 532.1 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 88.3 տոկոս:

-արտագերատեսչական ծախսեր / քաղաքային զբոսայգու պահպանման ծառայության վճար/- 2 420.0 հազար դրամի:

- պարտադիր վճարներ /կադաստր/ -557.9 հազար դրամ

- նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին – 50.0 հազար դրամ, (Լոռի 2019թ բերքի տոն,)

**-Տնտեսական հարաբերություններ** - նախատեսված 13 591.0 հազար դրամի դիմաց ծախսվել է 12 168.7 հազար դրամ, որից

**Սպիտակ համայնքի ասֆալտապատ ճանապարհների փոսային նորոգման աշխատանքների իրականացման համար** - 2019 թ. նախատեսված 12 711,0 հազար դրամի

դիմաց փաստացի կատարվել է 11 288,7 հազար դրամի աշխատանք, այդ թվում՝

-Ճանապարհների ընթացիկ նորոգում և պահպանում – 9 911.0 հազար դրամ,

- ընդհանուր բնույթի այլ ծառայություններ – 1 377.2 հազար դրամ, ձեռք է բերվել բեռնատար ավտոմեքենաների և ամբարձիչների ծառայություն:

**Գյուղատնտեսություն** – անասնաբուծի ծառայություններ -880.0 հազար դրամ,

**-Շրջակա միջավայրի պաշտպանություն** - Նախատեսված 64 779.8 հազար դրամի դիմաց ծախսվել է 60 384.5 հազար դրամ, կատարողականը կազմել է 93.2 տոկոս, որից

- Աղբի հավաքման և փոխադրման աշխատանքների վճարներ -17 718.0 հազար դրամ:

- սանիտարական մաքրման ծառայությունների վճարներ 18 070.6 հազար դրամ:

- ձմեռային մաքրման ծառայությունների վճարներ 3 085,0 հազար դրամ:

- Կանաչապատման աշխատանքներ՝ 2019թ-ին նախատեսվել է 8 900.0 հազար դրամ փաստացի ծառայություն է մատուցվել 8 899.8 հազար դրամի

**Բեռնափոխադրման տրանսպորտային ծառայությունների** համար ծախսվել է 320.0 հազար ՀՀ դրամ

**Տրանսպորտային նյութերի ձեռքբերում** - 230.5 հազար դրամ:

**Աղբարկղների ընթացիկ նորոգում** – 940.0 հազար դրամ:

**-Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ**

Նախատեսված 62 226.6 հազար դրամի դիմաց կատարվել է 61129.8 հազար դրամ, նախատեսվածից պակաս է ծախսվել 1 096.8 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 98.22 տոկոս

**-Փողոցների լուսավորություն**- Նախատեսված 8 011.6 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 7 688.5 հազար դրամ, որից էլ. էներգիայի վճար 5 701.0 հազար դրամ, (որից նախորդ տարվա պարտք 446.6 հազար դրամ), փողոցային լուսավորության

համակարգի նորոգման աշխատանքներ 1 215.0 հազար դրամ, հատուկ նպատակային այլ նյութեր 772.4 հազար դրամ, 2019թ-ին 2018թ. համեմատությամբ 1 811.8 հազար դրամ ավել է ծախսվել:

**-Բնակարանների կոմունալ սպասարկում ԲՍԳ ՀՈԱԿ** 2019թ-ի տարեկան բյուջեով նախատեսված 15 731.0 հազար դրամի դիմաց կատարվել են 14 957.3 հազար դրամ, կատարողականը կազմել է 98.2 տոկոս: 2019թ-ին 2018թ. համեմատությամբ 653.5 հազար դրամ ավել:

-«Վերականգնող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունները Վայք և Սպիտակ քաղաքներում» ծրագրի շրջանակներում երրորդ փուլի իրականացման նպատակով ներդրում Հաբիթաթ հիմնադրամին նախատեսվել է 38 484.0 հազար դրամ, փաստացի նախատեսվածը ֆինանսավորվել է ամբողջությամբ

**-Հանգիստ, մշակույթ և կրոն** («Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ, «Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ, սպորտային և այլ մշակութային միջոցառումներ) նախատեսված 40 927.5 հազար դրամի դիմաց կատարվել են 38 291.7 հազար դրամ, նախատեսվածից պակաս է ծախսվել 2 635.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 93,6 տոկոս:

2019թ. նախատեսված 8 644.0 հազար դրամի փոխարեն 8 295.1 հազար դրամ ծախսվել է համաքաղաքային միջոցառումներ՝ բանակի օր, մարտի 8, ապրիլի 7, հաղթանակի օր, երեխաների պաշտպանության օր, քաղաքի տոն, ուսուցչի օր, երկրաշարժի զոհերի հիշատակի օր, Ամանորյա և սուրբ ծննդյան տոներ կազմակերպելու և անցկացնելու համար: 85,3 դրամ տրամադրվել է սպորտային միջոցառումների ֆինանսավորման համար նախատեսված 300.0 դրամի փոխարեն:

2018թ-ի համեմատությամբ պակաս է ծախսվել 3 050.6 հազար դրամ:

**-Հանգստի և սպորտի ծառայություններ** 2019թ. նախատեսված 2 645.0 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 2 323.9 հազար դրամ, նախատեսվածից պակաս է ծախսվել 321.1 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 87.8 տոկոս:

**-Կրթություն**- նախատեսված 95 909.3 հազար դրամի դիմաց փաստացի ծախսվել է 94 311.2 հազար դրամ, նախատեսվածից պակաս է ծախսվել 1598.1 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 98.3 տոկոս, այդ թվում՝

**Նախադպրոցական կրթություն**- 2019թ. բյուջեով նախատեսվել է ծախսել 58 740.1 հազար դրամ: Փաստացի ծախսը կազմել է 57 289.8 հազար դրամ, տնտեսվել է 1 450.2 հազար դրամ:

**-Արտադպրոցական կրթություն** – 2019թ. բյուջեով նախատեսվել է ծախսել 35 696,2 հազար դրամ, փաստացի ծախսը կազմել է 35 548.5 հազար դրամ, տնտեսվել է 147.7 հազար դրամ:

### **Հանրակրթություն**

Միջնակարգ կրթության <<Սպիտակի ՏԵՐ–Սիմոնյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի նախադպրոցական կրթական միկրոծրագրերի իրականացման շրջանակներում նախակրթարաններ չհաճախող սոցիալական խնդիրներ ունեցող ընտանիքների երեխաներին

նախադարձական կրթություն տալու, աջակցելու համար նախատեսված 1 473.0 հազար ՀՀ դրամը ֆինանսավորվել է ամբողջությամբ:

-2018 թվականի բյուջեի կատարման արդյունքում առաջացած 5 426.6 հազար դրամ պարտքից վարչական մասով մարվել է 5 426.6 հազար դրամը կամ կատարվել է 100 տոկոսով:

## 2.Ֆոնդային բյուջեի ծախսեր

-Ֆոնդային բյուջեով 2019թ-ի համար նախատեսված 128 562.0 հազար դրամի դիմաց կատարվել է 114 115.6 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 88.8 տոկոս, որից՝

-**Ապարատի պահպանման ծախսեր** – 2019թ. նախատեսվել է ծախսել 1 112.0 հազար դրամ: Փաստացի ծախսվել է 722.5 հազար դրամ, որից 200.0 հազար ՀՀ դրամի ձեռք են բերվել ոչ նյութական հիմնական միջոցներ՝ 522,5 հազար դրամի վարչական սարքավորումներ: Մնացած մասով գնում չի իրականացվել, նախատեսվել էր ձեռք բերել տեսահսկման համակարգ, որը ձեռք է բերվել 2020թ. հունվարին:

**Պարտքեր**- Համայնքի 2018թ. տարեկան բյուջեի կատարման արդյունքում առաջացել է 5 426,6 դրամի պարտք, որը 2019 թվականին մարվել է ամբողջությամբ:

Այդ թվում՝

- ՀՈԱԿ-ների սուբսիդավորման գծով 702,7 հազար դրամ:
- Կոմունալ ծառայություններ- 2 087,4 հազար դրամ:
- Այլ հարկային պարտավորությունների պարտք – 2 636,5 հազար դրամ:

Համայնքի 2019թ. տարեկան բյուջեի կատարման արդյունքում առաջացել է 9 635,2 դրամի պարտք, որից՝

**վարչական բյուջեի մասով**- 5 817,3 հազար դրամ, այդ թվում՝

- ՀՈԱԿ-ների սուբսիդավորման գծով 605.7 հազար դրամ:
- Կոմունալ ծառայություններ- 2 268.7 հազար դրամ:
- Այլ հարկային պարտավորությունների պարտք – 2 942,9 հազար դրամ:

**Ֆոնդային բյուջեի մասով**- 3 817.9 հազար դրամ՝

- 2019թ-ին կատարված, սակայն չֆինանսավորված շինարարական աշխատանքների մասով:

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏ

### ✓ *Մշակույթի տան շենքի վերանորոգում, գազատարի կառուցում*

Ծրագրի արդյունքում ամբողջությամբ հիմնանորոգվել է մշակույթի տան 1760քմ մակերեսով տանիքը և գմբեթը, վերանորոգվել են կիսանկուղային հարկի 19,2քմ մակերեսով երթիկները և ջրամեկուսացվել պատերը, հիմնանորոգվել են սանհնգույցները, 451,62քմ ընդհանուր մակերեսով գրադարանը և գրապահոցը, տեղադրվել են օդափոխության և ջեռուցման նոր արդիական համակարգեր:

Ծրագրի արժեքը կազմել է 75 163 300 ՀՀ դրամ, որից համայնքապետարանի ներդրումը 3 336 400 ՀՀ դրամ է, Հայաստանի տարածքների զարգացման հիմնադրամի ներդրումը 71 826 900 ՀՀ դրամ:

Համայնքի միջոցներով կառուցվել է մշակույթի տան 220զծմ երկարությամբ գազատարը, ծրագրի արժեքը 2 830 840 ՀՀ դրամ:

Ներկայումս ընթացքի մեջ է ավարտված շինարարական օբյեկտի ավարտական ակտի կազմման աշխատանքները:

Ծրագիրն ընդգրկված է եղել Սպիտակ համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագրում որպես «Մշակույթի տան շենքի հիմնանորոգում» ոլորտային կապիտալ ծրագիր: Ըստ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի նախատեսվել էր վերանորոգման աշխատանքներն իրականացնել չորս տարվա ընթացքում՝ 2018-2021թթ. (աշխատանքների իրականացման թիրախային արժեքները ըստ տարիների 2018թ.-ին՝ 30%, 2019թ.-ին՝ 30%, 2020թ.-ին՝ 20%, 2021թ.-ին՝ 20%), սակայն Հայաստանի տարածքների զարգացման հիմնադրամի և համայնքապետարանի համագործակցությամբ ծրագիրն հիմնականում իրականացվել է 2018-2019թթ., կազմելով ընդհանուր վերանորոգման աշխատանքների 70%:

### ✓ *Երաժշտական և գեղարվեստի դպրոցների վերանորոգում*

Ծրագրի արդյունքում ջերմամեկուսացվել են երաժշտական և գեղարվեստի դպրոցների տանիքները և արտաքին պատերը, փոխվել են դռներն և պատուհանները, կառուցվել է արդիական ջեռուցման համակարգ, ջերմության կորուստը նվազել է շուրջ 60%-ով:

Ծրագիրը մեկնարկել է 2018 թվականին ՀՀ Կառավարության կողմից հաստատված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում և ավարտվել 2019թ.-ին:

Ծրագրի արժեքը կազմել է 16 812 000 ՀՀ դրամ է, որից համայնքապետարանի ներդրումը՝ 10 087 200 ՀՀ դրամ, ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 6 724 800 ՀՀ դրամ սուբվենցիա:

Ծրագիրն ընդգրկված է եղել Սպիտակ համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրում, որպես երկամյա (աշխատանքների իրականացման թիրախային



արժեքները ըստ տարիների 2018թ.-ին 50%, 2019թ.-ին 50%) ոլորտային կապիտալ ծրագիր: Ծրագրով իրականացված վերանորոգման աշխատանքներն կազմում են ընդհանուր վերանորոգման աշխատանքների 70%: 2020թ.-ին այլ ներդրողների միջոցներով նախատեսվում է իրականացնել ներքին հարդարման աշխատանքներ:

**✓ Թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի շենքի տանիքի վրա 43,5 կՎտ և Մշակույթի տան շենքի տանիքի վրա 50 կՎտ հզորությամբ արևային ֆոտոէլեկտրական համակարգերի կառուցում**

Ծրագրի արդյունքում թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի շենքի և մշակույթի տան շենքի տանիքի վրա կառուցվել է 43,5 և 50 կՎտ հզորությամբ 2 արևային մոնոբյուրեղային ֆոտովոլտային կայաններ, 25 տարի երաշխիքային ժամկետով, որոնց միջոցով կարտադրվի տարեկան 152000կՎտ էլեկտրաէներգիա, կապահովվի համայնքի կարիքների էլեկտրաէներգիայի ծախսը 85,1%, համայնքի բյուջեի տարեկան տնտեսումը կկազմի 6 836 960 ՀՀ դրամ:

Ծրագրի արժեքը կազմել է 37 404 000 ՀՀ դրամ է, որից համայնքապետարանի ներդրումը՝ 22 442 200 ՀՀ դրամ, ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 14 961 600 ՀՀ դրամ:

Ծրագիրը մեկնարկել է 2018թ.-ին ՀՀ Կառավարության կողմից հաստատված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում և ավարտվել 2019թ.:

Թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տանիքի վրա տեղադրված կայանը շահագործվել է 2019 թվականի մայիսի 22-ից և մինչև տարվա վերջ արտադրել է 39 850 կՎտ էլեկտրաէներգիա:

Մշակույթի տան տանիքին տեղադրված կայանը շահագործվել է 10.07.2019-ից և արտադրել է 35 829 կՎտ էլեկտրաէներգիա: Կայանների արտադրանքը ոչ միայն զրոյացրել է համայնքապետարանի, թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի, մշակույթի տան և գրադարանի էլեկտրաէներգիայի ծախսը, այլև 1 002 985 ՀՀ դրամ ՀԷՑ-ը փոխանցել է համայնքապետարանի հաշվին:

**✓ Առափնյա և Պանրագործների թաղամասերի անձրեվաջրատար առուների կառուցում, Պանրագործների թաղամասի փողոցի մայթեզրի եզրաքարերի ուղղման, մայթերի ասֆալտապատում**

Ծրագրի արդյունքում Պանրագործների թաղամասում կառուցվել է 800գծմ, Առափնյա թաղամասում՝ 110գծմ անձրևաջրատար առուներ, ուղղվել են Պանրագործների թաղամասի գլխավոր փողոցի մայթի եզրաքարերը՝ 520գծմ, ասֆալտապատել է 750քմ մակերեսով մայթը:

Ծրագիրն իրականացվել է 2019թ.-ին ՀՀ Կառավարության կողմից հաստատված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ծրագրի արժեքը կազմել է 26 053 200 ՀՀ դրամ, որից համայնքապետարանի ներդրումը՝ 13 026 600 ՀՀ դրամ, ՀՀ պետական բյուջեից տրամադրված սուբվենցիոն միջոցները՝ 13 026 600 ՀՀ դրամ:

Ներկայումս ընթացքի մեջ է ավարտված շինարարական օբյեկտի ավարտական ակտի կազմման աշխատանքները: Ծրագրի իրականացման ընթացքում անհարժեշտություն է առաջացել Պանրագործներ թաղամասում իրականացնել է մայթի գոյություն ունեցող լուսավորության հենասյուների տեղափոխման լրացուցիչ աշխատանքներ, որի համար համայնքի բյուջեից տրամադրվել է 397 255 ՀՀ դրամ:

**✓ *Սպիտակ համայնքի Տաշիր, Էստոնական, Ուզբեկական և Բանավան թաղամասերի փողոցային լուսավորության համակարգերի կառուցում***

Ծրագրի արդյունքում համայնքի Տաշիր, Էստոնական, Ուզբեկական և Բանավան թաղամասերում կառուցվել է 6773գծմ երկարությամբ, 205 հենասյուներով ու 100վտ (139 հատ) և 70վտ (66 հատ) հզորության LED լուսատուներով արդիական, էներգախնայող արտաքին լուսավորության նոր համակարգեր:

Ծրագրի արժեքը կազմել է 15 360 000 ՀՀ դրամ է, որից Սպիտակի համայնքապետարանի ներդրումը՝ 6 912 000 ՀՀ դրամ, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիոն միջոցները՝ 8 448 000 ՀՀ դրամ:

Ծրագրի իրականացման ընթացքում անհարժեշտություն է առաջացել Բանավան և Էստոնական թաղամասերում իրականացնել է լրացուցիչ լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքներ, որի համար համայնքի բյուջեից տրամադրվել է 1 532 279 ՀՀ դրամ:

**✓ *Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում***

2019թ.-ին ավարտվել 2015թ.-ին մեկնարկած Սպիտակի համայնքապետարանի և Եվրոմիության համաֆինանսավորմամբ՝ «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամի հետ համագործակցությամբ իրականացվող ԵՄ «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում» ծրագիրը:

Ծրագրի արժողությունը 999 631 Եվրո է, որից Սպիտակի համայնքապետարանի ներդրումը կազմում է 192 375 Եվրո:

Ծրագրի արդյունքում (2015-2019թթ.) Սպիտակի թիվ 2 մանկապարտեզի 200 լամպ փոխարինվել է էներգախնայող LED լամպով, մանկապարտեզի տանիքի վրա կառուցվել է 43,5 կՎտ հզորությամբ արևային մոնոբյուրեղային ֆոտովոլտային կայան, 27 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ ջերմամեկուսացվել են, փոխարինվել են տանիքները, փոխվել են շքամուտքերի դռներն ու պատուհանները, Ուզբեկական թաղամասի 5 բազմաբնակարան բնակելի շենքերում բացի նշված աշխատանքներից,

իրականացվել է նաև արտաքին պատերի նկուղների և առաստաղների ջերմամեկուսացում, բնակարանների պատուհանների փոխարինում:

2019թ.-ին կատարվել է ծրագրով նախատեսված Ս.Ավետիսյան փողոց թիվ 15/1, 15/2, 17, 17/1, 17/2 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ ջերմամեկուսացման, տանիքների փոխարինման, շքամուտքերի դռների ու պատուհանների փոխարնման շինարարական աշխատանքներ, ինչպես նաև Ուզբեկական թաղամասի 5 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների ջերմամեկուսացման, տանիքների շքամուտքերի դռների ու պատուհանների փոխարնման, նկուղներ պատերի ջրամեկուսացման, արտաքին պատերի և նկուղների առաստաղների ջերմամեկուսացման, բնակարանների պատուհանների փոխարինման աշխատանքներ:

Ծրագրի իրականացման արդյունքում տնտեսված միջոցների հաշվին համայնքի 32 բազմաբնակարան շենքերում փոխվել են 63 դռներ:

2019թ.-ին ծրագրում համայնքի համաֆինանսավորում կազմել է 39 984 000 ՀՀ դրամ:

Ծրագրում ընդգրկված շենքերի բնակիչները ևս պետք է ներդրում կատարեն, որի չափը ըստ բնակիչների հետ կքնված պայմանագրերի, կախված շենքում ներդրված գումարից՝ մեկ սենյականոց բնակարանի համար ամսական կազմում է մինչև 600-700 ՀՀ դրամ, երկու սենյականոց բնակարանինը՝ 700-1100 ՀՀ դրամ, երեք սենյականոց բնակարանինը՝ 1100-1500 ՀՀ դրամ, Ուզբեկական թաղամասի շենքերի բնակիչները որպես ներդրում համայնքի բյուջե պետք է վճարեն 1 սենյականոց բնակարանի համար 2150 ՀՀ դրամ, երկու սենյականոց բնակարանի համար՝ 2950 ՀՀ դրամ:

Բնակիչների կողմից համայնքի բյուջե վճարված գումարներն կօգտագործվեն ծրագրի շարունակությունը ապահովելու նպատակով:

### ***Քըրք-Քըրքորյան փողոցի և Այգեստան-2 թաղամասերի կոյուղագծերի կառուցում***

Ծրագրի արդյունքում Քըրք-Քըրքորյան փողոցում կառուցվել է 612գծմ կոյուղագիծ (շահառու 320 մարդ) և Այգեստան-2 թաղամասում՝ 1084գծմ (շահառու 370 մարդ):

Ծրագիրն իրականացվել է ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների ջրային կոմիտեի և համայնքապետարանի համագործակցությամբ:

Ծրագրի արժեքը կազմել է 25 707 200 ՀՀ դրամ է, որից համայնքի ներդրումը 6 426 800 ՀՀ դրամ, իսկ պետական բյուջեից ներդրումը՝ 19 280 400 ՀՀ դրամ:

Ծրագիրն ընդգրկված է եղել Սպիտակ համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրում, որպես երկարամյա (աշխատանքների իրականացման թիրախային արժեքները ըստ տարիների 2017թ.-ին 2,5%, 2018թ.-ին 18%, 2019թ.-ին 13%, 2020թ.-ին 15% և 2021թ.-ին 71% ) ոլորտային կապիտալ ծրագիր:

**✓ Զբոսայգու ներառական խաղահրապարակի լուսավորության նոր համակարգի կառուցում:**

2019թ.ին ավարտվել է 2018թ.-ին համայնքապետարնի և ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան հիմնադրամի համագործագծությամբ քաղաքային զբոսայգու տարածքում ներառական խաղահրապարակի կառուցման ծրագիրը:

ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան հիմնադրամի միջոցով իրականացվել է խաղահրապարակի կառուցման աշխատանքները՝ 22 702 250 ՀՀ դրամ արժողությամբ, իսկ համայնքապետարանի միջոցով բարեկարգվել է խաղահրապարակի տարածքը, կառուցվել է նոր 118գծմ երկարությամբ, 5 հատ մետաղյա 7-10մ բարձրությամբ հենասյուններով ու 50վտ հզորության 7 հատ LED լուսատուներով արդիական, էներգախնայող արտաքին լուսավորության համակարգ: Ծրագրի արժեքը՝ 827 112 ՀՀ դրամ է:

**✓ Առափնյա և Էստոնական թաղամասերում խաղահրապարակների տեղադրում**

Առափնյա և Էստոնական թաղամասերում տեղադրվել են խաղահրապարակներ, համայնքի բյուջեից ծախսվել է 990 000 ՀՀ դրամ:

**✓ Թիվ 2 դպրոցում նախակրթարանի հիմնում**

Դ.Տեր-Սիմոնյանի անվան թիվ 2 դպրոցի և «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակի համագործակցությամբ թիվ 2 դպրոցում իրականացվել է նախադպրոցական կրթության միկրոծրագիր՝ 35 աշակերտների համար բացվել է նախակրթարան: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 7 370 500 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կազմել է 1 772 900 ՀՀ դրամ:

**✓ Չափագրման ծառայությունների ձեռք բերում**

Ձեռք է բերվել 34 միավոր անշարժ գույքի չափագրման հաշվետվություն (19,532հա ընդհանուր մակերեսով հողամաս, 900քմ մակերեսով կիսակառույց, 17,39քմ մակերեսով պոմպակայան) ծառայությունների ձեռք բերման նպատակով համայնքի բյուջեից ծախսվել է 980 000 ՀՀ դրամ:

**✓ Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերում**

Ձեռք է բերվել «Սպիտակ համայնքի քաղաքային զբոսայգու խաղահրապարակի լուսավորության համակարգի (5 հենասյուն) կառուցման», «Սպիտակ համայնքի «Այգեստան-2» թաղամասի կոյուղագծի վերջնամասում կոյուղաջրերի հորի կառուցման», «Սպիտակ համայնքի Պանրագործներ թաղամասում անձրևաջրատար առվի կառուցման, մայթեզրերի եզրաքարերի ուղղման, մայթերի ասֆալտապատման նախագծում լրացում՝ մայթում գոյություն ունեցող լուսավորության հենասյունների տեղափոխման», «Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող Նիկոլայ Ռիժկովի արձանի պատվանդանի նորոգման»,

«Սպիտակ համայնքի Էստոնական թաղամասի գոյություն ունեցող լուսավորության համակարգերի ընդլայնման» և «Սպիտակ համայնքի Բանավան թաղամասի փողոցների լուսավորության համակարգերի կառուցման նախագծի լրացման» աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով համայնքի բյուջեից ծախսվել է 730 000 ՀՀ դրամ:

✓ 2019թ. ընթացքում համայնքապետարանի կողմից տրամադրվել է 24 շինարարության թույլտվություն՝ որից 3 հասարակական, 9 բնակելի և 2 արտադրական օբյեկտների կառուցման համար, 10 նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) և 8 շինարարության փաստագրման ակտ (շահագործման թույլտվություն), որից 3 հասարակական, 1 բնակելի, 4 այլ օբյեկտներ:

✓ Օրինականացվել է 21 ինքնակամ կառույց, որից 14-ը (8 բնակելի, 1 արտադրական և 5 հասարակական նշանակության) կառուցված են եղել քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում, 7-ը (5 բնակելի և 2 հասարակական նշանակության) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում:

14 ինքնակամ կառույցի օրինականացումից համայնքի բյուջե գանձվել է 2 324 052 ՀՀ դրամ: Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված 7 ինքնակամ կառույցներ օրինականացվել և գնման նախապատվության իրավունքով օտարվել են կառույցներն իրականացրած անձանց, օրինականացված գույքի օտարումից բյուջեի մուտքը կազմել է 741 050 ՀՀ դրամ:

✓ Օտարվել է 14,1594հա մակերեսով հողամաս (19 հողակտոր, որից 5-ը գյուղատնտեսական, 9-ը բնակավայրերի և 2-ը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության), համայնքի բյուջեի մուտքը կազմել է 43 770 530 ՀՀ դրամ:

#### ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ

✓ *Ուփյան փողոցի ճանապարհի ասֆալտապատում:*

Ծրագրի արդյունքում ասֆալտապատվել է Ուփյան փողոցի 2560քմ հատվածը: Ծրագիրն իրականացվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և համայնքապետարանի համաֆինանսավորմամբ: Ծրագրի արժեքը 24 210 000 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը՝ 1 200 000 ՀՀ դրամ: Ասֆալտապատման աշխատանքներից առաջ համայնքապետարանի և Վիոլա ջուր ընկերության կողմից փոխվել են փողոցի այդ հատվածով անցնող խմելու ջրի քայքայված ջրագծերի ցանցը, համայնքապետարանի ներդրումը կազմել է 243 000 ՀՀ դրամ:

**✓ Սպիտակի թիվ 2 դպրոցի տարածքի ասֆալտապատում:**

Ծրագրի արդյունքում ասֆալտապատվել է Սպիտակի թիվ 2 դպրոցի 1050քմ մակերեսով տարածքը: Ծրագիրն իրականացվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և համայնքապետարանի համաֆինանսավորմամբ: Ծրագրի արժեքը 6 825 000 ՀՀ դրամ, համայնքապետարանը կատարել է 450 000 ՀՀ դրամ ներդրում: Ասֆալտապատման աշխատանքներից առաջ համայնքապետարանի և Վիոլա ջուր ընկերության կողմից փոխվել են թիվ 2 դպրոցի տարածքով անցնող խմելու ջրի քայքայված ջրագծերի ցանցը:

**✓ Անձրևաջրատար առուների մետաղական ճաղավանդակների փոխում**

Փոխվել են Չարենց և Ուլյան փողոցների, Առափնյա և Պանրագործներ թաղամասերի, Կենտրոնական հրապարակին կից անձրևաջրատար առուների շարքից դուռ եկած մետաղական ճաղավանդակները: Ծրագրի արժեքը 2 136 000 ՀՀ դրամ:

**✓ Գրունտային ճանապարհների վերանորոգում**

Գրունտային ճանապարհների նորոգման աշխատանքներ են կատարվել Սպիտակ համայնքի Այգեստան, Փյունիկ, Ուզբեկական, Էստոնական, Գրիգոր Լուսավորիչ թաղամասերում: Մ-3 մայրուղու հիմնանորոգման աշխատանքների ժամանակ ֆրեզավորված ասֆալտի հանույթը տեղափոխվել է համայնքի թաղամասեր ճանապարհների հարթեցման համար, հարթեցման աշխատանքները կատարվել են Ա՛քնակիչներ, Ա՛ համայնքապետարանի կողմից: Աշխատանքների կատարման համար համայնքի բյուջեից ծախսվել է 1 169 200 ՀՀ դրամ:

✓ Ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ են իրականացվել համայնքի Ս.Ավետիսյան հրապարակում, Մյասնիկյան, Թորոսյան, Շահումյան, Չարենց, Թումանյան փողոցներում, պոլիկլինիկա տանող ճանապարհին, Կենտրոն 1, Այգեստան թաղամասերում և Շիրակի խճուղում: Ծրագրի արժեքը 9 118 080 ՀՀ դրամ:

✓ Պետական բյուջեի միջոցներով իրականացվել է Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ109+000 – կմ112+900 հատվածի միջին նորոգման աշխատանքները, սկսվել են Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ112+900 – կմ116+900 հատվածի հիմնանորոգման աշխատանքները:

✓ 2017-2019թթ. կնքված «Երթուղին փոխադրողին հատկացնելու մասին» թվով 6 պայմանագրերի (պայմանագրերի գործողության ժամկետները 3 տարի) համաձայն համայնքում գործում է 6 երթուղի՝ «Տեր-Սիմոնյան-Կենտրոն-Իտալական», «Կենտրոն-Վարպետաց թաղամաս-Շվեյցարական», «Կենտրոն-Վարպետաց թաղամաս-Շահումյան-

Գր.Լուսավորիչ», «Բանավան-Գերմանական-Կենտրոն-Իտալական», «Բանավան-Կենտրոն-Իտալական», «Շիրակի խճուղի-Կենտրոն-Էստոնական-Իտալական»:

Ուղևորափոխադրումներն իրականացվում են ըստ պայմանագրի ուղեգծի և շարժման չվացուցակի, մեկ ուղևորի փոխադրավարձը 100 ՀՀ դրամ, մինչև 18 տարեկան ուղևորների համար մեկ ուղևորի փոխադրավարձը 50 ՀՀ դրամ ըստ համայնքապետարանի և ուղևորափոխադրող կազմակերպությունների միջև ձեռք բերված համաձայնության:

✓ Սպիտակ համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման ձեռք բերելու համար համայնքի բյուջեից ծախսվել է 400 000 ՀՀ դրամ:

✓ Համայնքի տարածքում աղբահանության աշխատանքների իրականացման համար ծախսվել է 17 717 975 ՀՀ դրամ, աշխատանքները կատարվել են համաձայն Սպիտակ համայնքի ավագանու կողմից հաստատված սխեմայի, Գնումների մասին ՀՀ օրենքի համաձայն իրականացված գնման արդյունքում մրցույթում հաղթող ճանաչված Նարինե ՍՊԸ-ի կողմից:

✓ 2019թ. ձեռք է բերվել 30 (15 մեծ, 15 փոքր) աղբարկղ, համայնքի բյուջեի միջոցներից ծախսվել է 954 000 ՀՀ դրամ:

✓ Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի հովանավորությամբ և Սպիտակի ակտիվ երիտասարդների նախաձեռնությամբ համայնքի տարածքում տեղադրվել են տեսակավորված աղբի համար նախատեսված աղբամաններ: Տեսակավորված աղբի տեղափոխումը կազմակերպվում է համայնքապետարանի կողմից:

✓ Համայնքի տարածքում սանիտարական և ձյան մաքրման աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեի միջոցներից ծախսվել է 21 155 561 ՀՀ դրամ աշխատանքները կատարվել են համաձայն Սպիտակ համայնքի ավագանու կողմից հաստատված սխեմայի, Գնումների մասին ՀՀ օրենքի համաձայն իրականացված գնման արդյունքում մրցույթում հաղթող ճանաչված Նարինե ՍՊԸ-ի և «Սամվել Վելխանի Մաթոսյան» ԱԶ-ի կողմից:

✓ Համայնքը մասնակցել է համապետական շաբաթօրյակի, համայնքի բյուջեի միջոցներից ծախսվել է 114 600 ՀՀ դրամ:

✓ Կանաչապատման աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեի միջոցներից ծախսվել է 8 860 401 ՀՀ դրամ, աշխատանքները կատարվել են համաձայն կանաչապատման սխեմայի, Գնումների մասին ՀՀ օրենքի համաձայն իրականացված գնման արդյունքում մրցույթում հաղթող ճանաչված Նարինե ՍՊԸ-ի կողմից:

✓ Թափառող կենդանիների վնասազերծում 2019թ.-ի համար նախատեսվել է 280 000 ՀՀ դրամ, փաստացի ծախսեր չի կատարվել: Թափառող կենդանիների վնասազերծում չի

իրականացվել, նմանատիպ ծառայություն մատուցող կազմակերպության բացակայության պատճառով:

✓ Վերանորոգվել է համայնքի Շահումյան, Չարենց, Թորոսյան, Ուլյան, Քըրք-Քըրքորյան և Աճեմյան փողոցների փողոցային լուսավորության համակարգերը, համայնքի բյուջեից ծախսվել 535 050 ՀՀ դրամ:

✓ Սպիտակի զբաղվածության տարածքային կենտրոնի հետ համագործակցությամբ իրականացվել է «Սպիտակ համայնքի ճանապարհների հարակից տարածքների բարեկարգման օժանդակ աշխատանքներ» վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագիրը: Ծրագրի ընդհանուր արժեքը 951 700 ՀՀ դրամ ,որից համայնքի ներդրումը՝ 231 700 ՀՀ դրամ: Ծրագրի շրջանակներում ներկվել են համայնքի լուսավորության համակարգերի 271 հենասյուն:

*Ներդրողների և ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չեն իրականացվել Սպիտակ համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրով 2019թ.-ին նախատեսված հետևյալ ոլորտային կապիտալ ծրագրերը.*

✓ «Քաղաքաշինական փաստաթղթերի, գլխավոր հատակագծի կազմում, հաստատում» երկամյա (աշխատանքների իրականացման թիրախային արժեքները ըստ տարիների 2019թ.-ին 50% և 2020թ.-ին 50%) ծրագիրը: Ծրագրի ընդհանուր արժեքը 20 մլն ՀՀ դրամ:

✓ «Քաղաքային գերեզմանատան տարածքի բարեկարգում, ցանկապատում և ընդլայնում» եռամյա (աշխատանքների իրականացման թիրախային արժեքները ըստ տարիների 2018թ.-ին 44%, 2019թ.-ին 23%, 2021թ.-ին 33%) ծրագիրը: Ծրագրի ընդհանուր արժեքը 80 մլն ՀՀ դրամ:

✓ «Պատմամշակութային հուշարձ հանդիսացող Քըրք-Քըրքորյան թաղամաս տանող, միաթռիչք,19-րդ դարի կամրջի հիմնանորոգում» ծրագիրը: Ծրագրի արժեքը 30 մլն ՀՀ դրամ:

✓ «Մյասնիկյան փողոցի և Շիրակի խճուղու հիմնանորոգում» ոլորտային կապիտալ ծրագիրը: Ծրագրի ընդհանուր արժեքը 81,4 մլն ՀՀ դրամ:



### ✓ *Տնակների հաշվառում*

Սպիտակ համայնքի ղեկավարի 13.06.2018թ. թիվ 44 կարգադրությամբ, ՀՀ կառավարության 29.03.2018թ. թիվ 361-Ն որոշման պահանջների համաձայն, կատարվել է համայնքի վարչական տարածքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների, ինչպես նաև 1988թ. Սպիտակի երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ժամանակավոր կացարանների (տնակների) բնակության նպատակով զբաղեցված ոչ հիմնական շինությունների փաստագրման աշխատանքներ: Արդյունքում փաստագրվել է թվով 1212 ոչ հիմնական շինություն, որից՝

- բնակության նպատակով տեղադրված (կառուցված)՝ 1117,
- առևտրի, սպասարկման նպատակով տեղադրված (կառուցված)՝ 27,
- կենցաղային օգտագործման նպատակով տեղադրված (կառուցված)՝ 33,
- ծառայությունների մատուցման նպատակով տեղադրված (կառուցված)՝ 8,
- այլ՝ 27 ոչ հիմնական շինություններ:

Փաստագրված տնակների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ Լոռու մարզպետարան:

### ✓ *Բնակարանների (բնակելի տների) մասնավորեցում*

2019թ. ընթացքում աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացված բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված և բնակիչներին հատկացված, սակայն համայնքի սեփականություն հանդիսացող 3 բնակարաններ և 21 բնակելի տուն (կառուցված՝ «Վարպետաց թաղամասում»)՝ նվիրատվությամբ փոխանցվել են դրանք տիրապետողներին:

## ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Սպիտակ համայնքի մշտական բնակչության թիվը ՀՀ ոստիկանության ԱՎՎ Սպիտակի անձնագրային բաժնի կողմից տրված տվյալներով 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 17 172 մարդ, որից տղամարդիկ կազմում են բնակչության 50%-ը (8 608 մարդ), կանայք՝ 50% (8 564 կին), իսկ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝

17192 մարդ, որից տղամարդիկ կազմում են բնակչության 50%-ը (8 612 մարդ), կանայք՝ 50%(8 580 կին):

2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ

Փաստացի բնակվողների թիվը կազմում 10392 բնակիչ:

Նպաստառուների թիվը՝ 991 ընտանիք:

2019թ. ընթացքում Սպիտակ համայնքում ծնվել է 133 երեխա, մահացել 94 մարդ, գրանցվել է 60 ամուսնություն, 13 ամուսնալուծություն:

2018թ հետ համեմատած 2019 թվականի ընթացքում Սպիտակ համայնքում ծնված երեխաների թիվը ավելացել է 19-ով, մահացածների թիվը պակասել է 12-ով, ամուսնությունն ավելացել է 11-ով, ամուսնալուծությունները պակասել են 3-ով:

Տեղական ինքնակառավարման մարմիններն են՝

1. Համայնքի ավագանին՝ բաղկացած 15 անդամից, (ընտրված 2016 թվականի հոկտեմբերի 2-ին) լիազորությունների սկիզբը 2016թ. նոյեմբերի 21-ից:

2. Համայնքի ղեկավարը (ընտրված 2016 թվականի ապրիլի 17-ին), լիազորությունների սկիզբը 2016թ հունիսի 6-ից:

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքների թիվը 49 է, որից քաղաքական և հայեցողական պաշտոն զբաղեցնողներ-4, համայնքային ծառայողներ-35, տեխնիկական սպասարկման անձնակազմ-10:

2019 թվականի ընթացքում աշխատակազմի հաստիքային միավորներից 1-ը՝ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետի համայնքային ծառայության պաշտոնը կրճատվել է: Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնում ավելացել է

գլխավոր մասնագետ-գնումների համակարգողի հաստիքային միավոր, տեխնիկական սպասարկման անձնակազմից հանվել է սեզոնային հնոցապահի 2 հաստիքային միավորը, դեկտեմբեր ամսին ավելացել է 3 պահակի հաստիքային միավոր:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքապետարանի աշխատակազմում թափուր հաստիքների թիվը 8-ն էր, 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6:

2019 թվականի ընթացքում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ, ինչպես նաև համայնքային ծառայողների ատեստավորում չեն անցկացվել:

Ատեստավորման ենթակա են 13 համայնքային ծառայող:

2019թ համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է եղել 5 կառուցվածքային և 1 առանձնացված ստորաբաժանումներից:

### **Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝**

Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ

Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժին
2. Քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին
3. Սոցիալական, մշակույթի, երիտասարդության, սպորտի և լրատվության բաժին
4. Քարտուղարության բաժին
5. Ներքին աուդիտի բաժին

### **Առանձնացված ստորաբաժանում**

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Սպիտակի տարածքային բաժին:

Համայնքի ենթակայությամբ գործում են՝

«Սպիտակի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ,

«Սպիտակի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ,

«Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն»

ՀՈԱԿ,

«Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն»

ՀՈԱԿ,

«Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ,

«Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ,

«Սպիտակի բնակարանների սպասարկման գրասենյակ» ՀՈԱԿ ոչ առևտրային

կազմակերպությունները:

“Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց,, ՀՈԱԿ-ը գտնվում է լուծարման գործընթացում:

### **Բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը**

ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որն զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Սակայն համայնքի բնակիչները դեռևս բավականին ակտիվություն չեն ցուցաբերում ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հանրային քննարկումներին մասնակցելու ուղղությամբ: Հանրային քննարկումներին նրանց մասնակցությունն ապահովվում է հրավերների միջոցով:

Համայնքի ավագանու նիստերը 2016թ հուլիսից հեռարձակվում են, որը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ բնակչության իրազեկվածության բարձրացմանը, վստահության ամրապնդմանը, նիստերի անցկացման մասին հայտարարությունը տեղադրվում է համայնքի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

*2019 թվականի ընթացքում համայնքապետարանում մուտքագրվել է քաղաքացիներից ստացված 734 դիմում, որից՝*

*դրամական օգնություն տրամադրելու մասին – 128 դիմում կամ 17,4%*

*բնակարանային հարցերով - 39 դիմում կամ 5,3%*

*գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու մասին – 14 դիմում կամ 2% (զինվորականներ)*

*քաղաքաշինության և հողօգտագործման հարաբերությունները կարգավորելու մասով – 206 դիմում կամ 28%*

*անձնակազմի վերաբերյալ – 91 դիմում կամ 12,4%*

*տեղեկանքի տրամադրում- 148 դիմում կամ 20,2%*

*այլ բնույթի - 108 դիմում կամ 14,7% (խնամակալություն սահմանելու, զինծառայողներին կարճաօր արձակուրդ հատկացնելու համար միջնորդություն տրամադրելու, անշարժ գույքի վկայականում անվան, հայրանվան փոփոխությունների կատարում)*

*ՀՀ վարչապետին դիմել են համայնքի 19 բնակիչ, ՀՀ Լոռու մարզպետին հասցեագրվել է 21 դիմում:*

*Դիմումներին սահմանված ժամկետներում հիմնականում տրվել է համապատասխան ընթացք:*

Իրավաբանական անձանցից ստացվել է 1767 գրություն:

Համայնքապետարանի կողմից պատրաստվել են 1699 ելից գրություններ, որոնք ուղարկվել են հասցեատերերին,

Համայնքապետարանի աշխատակազմի կողմից տրամադրվել է թվով 920 տեղեկանք՝ ըստ պահանջի:

2019 թվականի ընթացքում համայնքապետարանում ստացված հայտերին համապատասխան համայնքի ղեկավարի կողմից համայնքի վարչական տարածքում գործող տնտեսվարող սուբյեկտներին տրվել է ոգելից և ավկահոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի, արտաքին գովազդի տեղադրման, հանրային սննդի կազմակերպման և իրացման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առ ու վաճառքի թվով 60 թույլտվություն:

Համայնքի ղեկավարն ընդունել է 483 որոշում, արձակել՝ 94 կարգադրություն:

Կայացել է Սպիտակ համայնքի ավագանու 13 նիստ, ընդունվել 75 որոշում:

Աշխատակազմի քարտուղարի կողմից արձակվել է 105 հրաման:

Համայնքի ղեկավարի մոտ ընդունելությանը մասնակցել է 166 քաղաքացի:

2019 թվականին գույքահարկի պարտավորությունները չկատարելու գծով հարուցվել է 2 վարչական վարույթ, հողի հարկի պարտավորությունները չկատարելու գծով՝ 2 վարչական վարույթ, որի արդյունքում ընդունվել են գույքահարկի և հողի հարկի գումարի գանձման որոշումներ՝ ընդհանուր 199 140 ՀՀ դրամի չափով, որից գույքահարկ՝ 193 153 ՀՀ դրամ և հողի հարկ՝ 5987 ՀՀ դրամ:

2019 թվականի ընթացքում հարուցվել է վարչական իրավախախտման 8 գործ, որից 7-ի դեպքում ընդունվել է վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում, իսկ 1-ի դեպքում ընդունվել է վարչական իրավախախտման գործի քննությունը կարճելու մասին որոշում:

Վարչական իրավախախտման 7 գործերից 1-ը՝ առանց թույլտվության հեղուկ վառելիքի վաճառք իրականացնելու համար անհատ ձեռնարկատեր Արսեն Դունամայանին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը, բողոքարկվել է դատական կարգով (գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանում), 1-ը ուղարկվել է հարկադիր կատարման, որը 2020 թվականի փետրվար ամսվա դրությամբ կատարվել է 10 400 ՀՀ դրամի չափով, իսկ մյուս

5-ի դեպքում իրավախախտում կատարած անձինք կամովին վճարել են տուգանքը՝ ընդհանուր 820 000 ՀՀ դրամի չափով:

ՔԿԱԳ Սպիտակի տարածքային բաժնում 2019թ. կատարվել են հետևյալ ակտային գրանցումները (ներառյալ Սպիտակի տարածաշրջանը)՝

- |  |  |
|--|--|
| 1. ծննդյան -447,                           | 7. Անվան, ազգանվան, հայրանվան փոխման -22,    |
| 2. ամուսնության- 182,                      | 8. Գրանցումների ուղղման, լրացման -219,       |
| 3. ամուսնալուծության – 28,                 | 9.Վկայականի կրկնօրինակների տրամադրում - 244  |
| 4. հայրության ճանաչման- 302,               | 10. տեղեկանքներ – 144,                       |
| 5. որդեգրման -0,                           | 11.Վկայականի կրկնօրինակ ստանալու ծանուցում 5 |
| 6. քաղաքացիական կացության վերականգնման -2, | 12. մահվան -317:                             |

## ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2019-2020 ուսումնական տարում Սպիտակ համայնքում գործող 1 ավագ, 1 միջնակարգ, 5 հիմնական դպրոցներ հաճախում է 1760 աշակերտ, /24 երեխա հաճախում է թիվ 3 հիմնական դպրոցի նախակրթարան, 30 երեխա հաճախում է թիվ 2 հիմնական դպրոցի նախակրթարան/: Հանրակրթության համակարգում աշխատում է 205 մանկավարժ, 66 օժանդակ աշխատող: Առաջին դասարան է հաճախում 181 աշակերտ, ավագ դպրոցի աշակերտների թիվը 218 է: Համայնքապետարանն ակտիվորեն համագործակցում է հանրակրթական դպրոցների հետ: Համայնքապետարանի օժանդակությամբ մշտապես իրականացվում են կրթության բարելավման ծրագրեր: Ամեն տարի հավուր պատշաճի տոնվում է Գիտելիքի օրը, Ուսուցչի տոնը: Համայնքապետարանի պատասխանատու աշխատակիցներն ընդգրկված են դպրոցների կառավարման խորհուրդներում: Դպրոցականներն ակտիվորեն մասնակցում են համաքաղաքային միջոցառումներին:

### **Նախադպրոցական կրթություն**

«Սպիտակի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը գործում է 6 խմբով, հաստատություն ընդունված երեխաների թիվը՝ 198 երեխա, տարեկան միջին հաճախումը՝ 180 երեխա, աշխատողների ընդհանուր թիվը՝ 26:

2019թ-ին համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրով նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի գործունեությունն ապահովելու համար կանխատեսվել է 43 207,1 հզ. դրամ, 2019թ համայնքի ճշտված բյուջեով՝ նախատեսվել է 43 373,5 հազ. դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 40 971.7 հազ. դրամ, որից վճարվել է

- աշխատավարձ՝ 24 810,9 հազ. դրամ,
- էլեկտրաէներգիայի վարձավճար - 794,3 հազ. դրամ,
- կոմունալ ծառայությունների վճար – 436.700 հազ. դրամ
- սննդի ձեռք բերման գումար - 13 020,8 հազ. դրամ
- այլ ծախսեր 1 909,0 հազ. դրամ
- Մեկ երեխայի հաշվով տարեկան ծախսը կազմել է 20,7 հազ. դրամ, սննդի ծախսը օրական՝ 420 դրամ:

2019թ նՈՒՀ-ի գործունեության ընթացքում տնտեսվել է 2 401,4 հազ դրամ, կամ ծախսերի գծով կատարողականը կազմել է 90,86 տոկոս, որը հիմնականում պայմանավորված է

երեխաների հաճախելիության հետ կապված ձեռք բերվող սննդամթերքի քանակային փոփոխություններով և էներգետիկ ծախսերի նվազմամբ:

2019թ.-ին գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 9 512,6 հազ.դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 5,0 հազ.դրամ/:

«Սպիտակի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ, գործում է 2 խմբով, հաստատություն ընդունված երեխաների թիվը՝ 62, տարեկան միջին հաճախումը՝ 57 աշխատողների ընդհանուր թիվը՝ 14:

2019թ.-ին համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրով ՆՈՒՀ-ի գործունեությունն ապահովելու համար կանխատեսվել է 17 700 հազ.դրամ, 2019թ համայնքի բյուջեով նախատեսվել է 16 314.0 հազ. դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 16 312.9 հազար դրամ, որից վճարվել է

- աշխատավարձ՝ 10 793.9 հազ. դրամ,
- էլեկտրաէներգիայի վարձավճար – 536.8 հազ. դրամ,
- կոմունալ ծառայությունների վճար – 694.9 հազ. դրամ
- սննդի ձեռք բերման գումար – 3 692.0 հազ.դրամ
- այլ ծախսեր 595.3 հազ.դրամ
- մեկ երեխայի հաշվով տարեկան ծախսը կազմել է 26,0 հազ. դրամ, սննդի ծախսը օրական՝ 420 դրամ:

2019թ. ծախսերի կատարողականը կազմել է 99,99%: 2019թ.-ին գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 2 543.0 հազ.դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 5,0 հազ.դրամ/:

Ընդհանրապես ՆՈՒՀ-երի գործունեությունն ապահովելու համար 2019թ.-ին համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված էր 80 200,0 հազ. դրամ, սակայն 2019թ. համայնքի բյուջեով նախատեսվել է 59 521,1 հազ.դրամ, քանի որ զարգացման ծրագրով նախատեսվել էր, որ մինչև 2017-2018 ուսումնական տարին կգործարկվի համայնքապետարանի կողմից հատկացված Վարպետաց թաղամասում 1 հա մակերեսով հողամասի վրա «Տաշիր» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ կառուցվող տիպային մանկապարտեզի շենքը: Սակայն նոր մանկապարտեզի շինարարության աշխատանքները տարբեր պատճառներով չեն իրականացվել: Ներկայումս միջոցներ են ձեռնարկվում 2020թ. այդ աշխատանքները վերսկսելու ուղղությամբ: Նոր կառուցվող



մանկապարտեզը հնարավորություն կընձեռնի 3-5 տարեկան շուրջ 150 երեխայի ստանալ նախադպրոցական կրթություն:

Ընթացքի մեջ է ՆՈՒՀ-երի լիցենզավորման աշխատանքների գործընթացը: Հաճախակի մոնիթորինգ է իրականացվել երեխաների հաճախումները վերահսկելու ուղղությամբ, մշտապես հսկողություն է իրականացվել նաև ՆՈՒՀ-երում ձմեռային ժամանակահատվածում խմբասենյակների, ննջասենյակների օդի ջերմաստիճանի սահմանված նորմային համապատասխան ջերմաստիճանի պահպանության, սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանների ապահովման, սննդի անվտանգության վրա: Առաջընթաց է արձանագրվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների սննդի տեսականու և որակի բարելավման ուղղությամբ: Երեխաների առօրյան հաճելի և բովանդակալից դարձնելու համար կազմակերպվել են բազմապիսի միջոցառումներ՝ ցերեկույթներ, հանդեսներ, սպորտլանդիաներ: ՆՈՒՀ-երի հետ արդյունավետ և սերտորեն համագործակցել են քաղաքային գրադարանի, գեղարվեստի դպրոցի, մշակույթի տան աշխատակիցները: Իրականացվել են փոխայցելություններ, բազմաբնույթ ուսուցողական ու զվարճալի միջոցառումներ՝ երեխաների համակողմանի ու ներդաշնակ զարգացման ապահովման նպատակով:

### **Արտադպրոցական կրթություն**

«Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ - սովորում է 139 աշակերտ, աշխատողների ընդհանուր թիվը՝ 23, որից 18-ը՝ ուսուցիչներ: Պետական աջակցությամբ վարձավճարի փոխհատուցմամբ ազգային նվազարանների բաժնում սովորում է 20 աշակերտ, լարային բաժնում՝ 2 աշակերտ:

Սպիտակի երաժշտական դպրոցի գործունեությունն ապահովելու համար համայնքի զարգացման 2017-2021 թվականների հնգամյա ծրագրով նախատեսվել է 27 700,0 հազ. դրամ, 2019թ. համայնքի բյուջեով՝ 26 557,2 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է

26 549,6 հազ. դրամ, որից վճարվել է

- աշխատավարձ՝ 24 861.1 հազ. դրամ,
- էլեկտրաէներգիայի վարձավճար – 830.9 հազ. դրամ,
- կոմունալ ծառայությունների վճար – 148.58 հազ. դրամ
- այլ ծախսեր 709.0 հազ. դրամ

Տնտեսվել է 1 142.8 հազար դրամ, էներգետիկ ու կոմունալ ծախսերի կրճատմամբ: Մեկ սովորողի ամսական փաստացի ծախսը կազմել է 18,9 հազ. դրամ: 2019թ. ծախսերի

կատարողականը կազմել է 96,5 %: 2019թ.-ին գանձվել է 2 030.0 հազ.դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 2,0 հազ.դրամ/:

2019թ. հունիսի 6-ին Սպիտակի երաժշտական դպրոցի երգչախումբը դաշնամուրային բաժնի աշակերտներ և դուդուկի 3-րդ դասարանի աշակերտ Արեն Բաղդասարյանը մասնակցել են պատանի երաժիշտ-կատարողներ «Կոմիտաս» մրցույթ փառատոնին և արժանացել պատվոգրերի և շնորհակալագրերի: Երգչախումբը և դաշնամուրային բաժնի 3-րդ դասարանի աշակերտ Տիգրան Խաչատրյանը արժանացել են 3-րդ կարգի մրցանակի:

2019 թվականի նոյեմբերի 30-ին «Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին» ծրագրի շրջանակներում Ազգային նվագարանների երգի, պարի և ասմունքի Լոռու մարզային փառատոնի ժող. նվագարաներ անվանակարգում 2-րդ կարգի մրցանակի և շնորհակալագրի արժանացավ Սպիտակի երաժշտական դպրոցի դուդուկի 4-րդ դասարանի աշակերտ Մենուա Դավթյանը: Դպրոցի քանոնահարների համույթը, ազգային նվագարանների նվագախումբը և երգչախումբը մասնակցել են նաև համաքաղաքային միջոցառումներին: Հիշարժան և տոն օրերին դպրոցում կազմակերպվել են համերգներ դպրոցի շնորհալի սաների մասնակցությամբ:

«Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ - դպրոցը գործում է 10 խմբով, սովորում են 65 երեխաներ, աշխատակիցների թիվը՝ 10:

Դպրոցի գործունեությունն ապահովելու համար ըստ համայնքի զարգացման 2017-2021 թվականների հնգամյա ծրագրի նախատեսվել է 9 800,0 հազար դրամ: 2019թ.համայնքի բյուջեով նախատեսվել է 9 139.0 հազար դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 9027,2 հազար դրամ, որից

- աշխատավարձ՝ 8 206.5 հազ. դրամ,
- էլեկտրաէներգիայի վարձավճար – 431.7 հազ. դրամ,
- կոմունալ ծառայությունների վճար – 52.5 հազ. դրամ
- այլ ծախսեր 336.5 հազ.դրամ

Տնտեսվել է 111.8 հազ.դրամ: 2019թ. ծախսերի կատարողականը կազմել է 99,8%: Մեկ սովորողի ամսական փաստացի ծախսը կազմել է 12,8 հազ.դրամ: 2019թ.-ին գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 1 258.0 հազ. դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 2,0 հազ.դրամ/:

Դպրոցի աշխատակազմը և սովորողները մեծ ոգևորությամբ են մասնակցում ինչպես համայնքային, այնպես էլ մարզային և հանրապետական միջոցառումներին: Օգոստոսի 25-ին

դպրոցի սաները մասնակցել են «Իմ Սարյանը» համահայկական մանկապատանեկան նկարչական IX մրցույթ-փառատոնին, որի ընթացքում դպրոցի 13 սաների աշխատանքներ ճանաչվել են լավագույնը և արժանացել են մրցանակների:

Դեկտեմբերի 12-ին դպրոցի 10 սաների և ուսուցիչների լավագույն աշխատանքները ներկայացվել են Երևանի Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում «Մենք ենք մեր մարզը» խորագիրը կրող համերգ-ցուցահանդեսին, որի շրջանակներում Լոռու մարզը ճանաչվել է լավագույնը:

Դպրոցի սաները և աշխատակազմը մասնակցություն են ունեցել նաև Վանաձորում կազմակերպված Քաղաքացու օրվան նվիրված միջոցառմանը:

Դպրոցում մշտապես գործող պատկերասրահի ցուցանմուշները՝ գունանկար, գծանկար, գորբելեն, դեկորատիվ կիրառական արվեստի գործեր պարբերաբար թարմացվել են՝ ՀՀ տոնական օրերին և հիշարժան տարեթվերին համահունչ: 2019թ. բացվել է նոր՝ գորգագործության և կարի խմբակ:

«Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ

Մշակույթի տանը գործում են երգի, պարի, մանկական թատերական 3 խմբեր՝ 43 սաներով, աշխատակիցների թիվը՝ 12:

Մշակույթի տան գործունեությունն ապահովելու համար համայնքի զարգացման 2017-2021 թվականների հնգամյա ծրագրով նախատեսվել է 12200,0 հազար դրամ, 2019թ համայնքի բյուջեով՝ 12 732,7 հազ.դրամ: Փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 12 391.2 հազ.դրամ, որից

- աշխատավարձ՝ 10 278.8 հազ. դրամ,
- էլեկտրաէներգիայի վարձավճար – 1 477.9 հազ. դրամ,
- կոմունալ ծառայությունների վճար – 200.5 հազ. դրամ
- այլ ծախսեր 434.0 հազ.դրամ

Տնտեսվել է 341,5 հազ. դրամ: 2019 թ. կատարողականը կազմել է 97,3%: 2019թ.-ին գանձվել է 644.0 հազ. դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց /յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 2,0 հազ.դրամ/:

Մշակույթի տան երգի, պարի համույթները մշտապես մասնակցել են հանրապետությունում և մարզում կազմակերպված փառատոների ու մրցույթների: Մշակույթի տան սաները և

աշխատակազմը մասնակցություն են ունեցել Վանաձորում կազմակերպված Քաղաքացու օրվան նվիրված միջոցառմանը:

«Մինորա» մշակութային կենտրոնի հրավերով մշակույթի տան սաները Սևանում մասնակցել են երաժշտական փառատոնի և արժանացել պատվոգրի ու մեդալի: Մասնակցություն են ունեցել նաև Երևանում «Մինորա» մշակութային կենտրոնի կողմից կազմակերպված մրցույթ-փառատոնին, որտեղ գրավել են 2-րդ և 3-րդ մրցանակային տեղերը: Մշակույթի տան սաները մասնակցել են նաև Վանաձորում կազմակերպված մարզային փառատոնին: Մշակույթի տան «Հեքիաթների աշխարհ» թատերական ստուդիայի սաները Վանաձորի մանկատանը ցուցադրել են բարեգործական ներկայացում՝ «Բարիկենդանը»: Մշակույթի տան թատերական խումբը մասնակցել է նաև Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված «Թատերական Լոռի» փառատոնին Աքորի համայնքում, որտեղ նրանց ներկայացումը գրավել է ներկաների ուշադրությունը, և բազմաթիվ հանդիսատեսների խնդրանքով մեր տաղանդավոր համաքաղաքացիները ներկայացումը խաղացել են երեք անգամ՝ փոխանցելով հանդիսատեսին նույն ոգևորությունը՝ ամեն անգամ արժանանալով ամենաբուռն ծափահարությունների և գովասանքի խոսքերի: Մասնակցություն են ունեցել Երևանում «Մինորա» մշակութային կենտրոնի կողմից կազմակերպված թատերական մրցույթ փառատոնին, որտեղ արժանացել են «Լավագույն դեկորներ» պատվոգրին:

### **Համայնքում կազմակերպվել են նաև հետևյալ միջոցառումները՝**

-Ավանդույթի համաձայն Հայոց բանակի օրվա կապակցությամբ համայնքապետարանի երիտասարդ աշխատակիցները հունվարի 28-ին այցելություններ են կատարել Ժամկետային զինծառայողների ընտանիքներ և նրանց հանձնել խորհրդանշական նվերներ /կոնյակ/ - 50 հատ, կոնֆետներ 65 հատ, շնորհակալագրեր և տոնական բացիկներ: Միջոցառումն իրականացնելու համար ծախսվել է 648 250 ՀՀ դրամ:

- Կանանց միամսյակի կապակցությամբ՝ ապրիլի 7-ին համայնքապետարանի աշխատակիցների կողմից կատարվել են այցելություններ համայնքի զարգացման գործում ավանդ ներդրած և աշխատանքային մեծ վաստակ ունեցող տարեց կանանց ընտանիքներ և հանձնվել ծաղիկներ և հուշանվերներ: Միջոցառման կազմակերպման համար ծախսվել է 212 850 ՀՀ դրամ:

-Ապրիլյան քառօրյա պատերազմի 3-րդ տարելիցին հուշարձանների պուրակում զոհերի հիշատակին նվիրված խաչքարի մոտ մատուցվել է հարգանքի տուրք և կատարվել

պսակադրության արարողության, որի համար ծաղկեպսակ ձեռք բերելու նպատակով հատկացվել է 25 000 ՀՀ դրամ:

-2019թ. Սպիտակ համայնքի ղեկավարի հրավերով ապրիլի 25-28-ը պաշտոնական այցով Սպիտակ էին ժամանել Սամարայի քաղաքային շրջանի պատվիրակությունը/3անձ/, քաղաքային շրջանի ղեկավար Ելենա Լապուշկինայի գլխավորությամբ: Նպատակը՝ Սամարա քաղաքային շրջանի և Սպիտակ համայնքի միջև համագործակցության համաձայնագրի ստորագրումն էր և գործընկերային կապերի շրջանակներում համագործակցության հարցերի քննարկումը: ՀՀ-ում պատվիրակության կեցության և տրանսպորտային ծախսերը կատարվել են համայնքապետարանի բյուջեի հաշվին՝ 746 .0 հազ.դրամ:

-2019թ. սեպտեմբերի 4- 9-իը պատասխան այցով Ռուսաստանի Դաշնության Սամարա քաղաքում է գտվել Սպիտակ համայնքի պատվիրակությունը՝ համայնքի ղեկավարի գլխավորությամբ: Նպատակը՝ Սամարա քաղաքի հիմնադրման 433-րդ տարեդարձի տոնակատարություններին մասնակցելը և համագործակցության պայմանագրի շրջանակներում հետագա անելիքների քննարկումը: Ծախսվել է 536, 7հազ դրամ /ավիատոմսեր և հուշանվերներ ձեռք բերելու համար/: Մնացած ծախսերը հոգացել է հրավիրող կողմը:

-2019թ. ապրիլի 24-ին Հայոց Մեծ Եղեռնի 104-րդ տարելիցի կապակցությամբ Սպիտակ համայնքում՝ Սպիտակի Սուրբ Հարություն եկեղեցում կազմակերպվել է պատարագ ի հիշատակ անմեղ զոհերի/ հոգևոր հովիվ Տեր Օվսե քահանա Հովհաննիսյանի մատուցմամբ/, որից հետո եկեղեցու բակում տեղադրված Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանին և Շիրակի մարզի Հազազի ձորում գտնվող Եղեռնի զոհերի հուշահամալիրներին Սպիտակ համայնքապետարանի, Սպիտակում գործող կազմակերպությունների ու բնակիչների կողմից կատարվել է պսակադրության արարողություններ: Միջոցառման կազմակերպման համար ծախսվել է 50 000 ՀՀ դրամ:

-2019թ. ապրիլի 27-ին «Քաղաքացու օր» հանրապետական միջոցառման շրջանակներում Վանաձորում անց է կացվել միջոցառումների շարք, որին մասնակցել են նաև մեր համայնքի գեղարվեստական խմբերը և անհատ ստեղծագործողները: Կազմակերպվել է նաև ցուցահանդես, որտեղ ներկայացվել են գեղարվեստի դպրոցի սաների ստեղծագործական աշխատանքները, գրադարանի թանգարանային բաժնի հնամենի առարկաներ և այլ իրեր:

Համայնքի մասնակիցներին և ցուցահանդեսային պարագաները տեղափոխելու նպատակով երկու տրանսպորտային միջոց ձեռք բերելու համար հատկացվել է 30 000 ՀՀ դրամ:

-Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 74 և Շուշիի ազատագրման 27 ամյակների կապակցությամբ՝ մայիսի 9-ին Ապիտակ համայնքի «Հաղթանակ» զբոսայգում անց է կացվել ՀՄ և Արցախյան պատերազմներում զոհվածների հիշատակի հուշարձանի մոտ պսակադրման արարողություն և Սպիտակի մշակույթի տան սաների և թիվ 2 հիմնական դպրոցի աշակերտների մասնակցությամբ տոնական միջոցառում: Միջոցառման համար ծախսվել է 35, Օհազ. դրամ/ծաղկեպսակ և ծաղիկներ ձեռք բերելու համար:

-Հայաստանի Հանրապետության Անկախության 28-ամյակի կապակցությամբ Սպիտակի համայնքապետարանի աջակցությամբ Սպիտակ համայնքի կրթական և մշակութային հաստատությունների մասնակցությամբ անց են կացվել միջոցառումների շարք:

-2018-2019 ուսումնական տարվա «Վերջին զանգ»-ի կապակցությամբ համայնքի 86 շրջանավարտների համար շնորհավորական բացիկներ ձեռք բերելու նպատակով հատկացվել է 25 800 ՀՀ դրամ:

- Հուլիսի 15-ին քաղաքի տոնը նշելու համար հատկացվել է 23 000 ՀՀ դրամ, միջոցառումները հիմնականում կազմակերպվել են համայնքում գործող կրթական ու մշակութային խմբերի միջոցով:

-2019թ. սեպտեմբերի 8-ին Երևան քաղաքում անց է կացվել «Ինչ, որտեղ, երբ» ինտելեկտուալ խաղի Հայաստանի առաջնությունը, որտեղ իրենց մասնակցությունն են ունեցել նաև Սպիտակ համայնքի «Առագաստ» թիմը: Նկատի ունենալով միջոցառման կարևորությունը համայնքի երիտասարդների խաղային կրթության զարգացման և տարածման ուղղությամբ, համայնքի ներկայացուցիչների մասնակցությունն ապահովելու նպատակով տրամադրվել է 25 000 ՀՀ դրամ՝ տրանսպորտային ծառայություն ձեռք բերելու համար:

-2019թ. սեպտեմբերի 29-ին Նոյեմբերյան քաղաքում և Լոռու մարզի Աբրի գյուղում «Թատերական Լոռի» 25-րդ միջազգային փառատոնի շրջանակներում իրականացվող միջոցառումներին Սպիտակի մշակույթի տան թատերական ստուդիայի սաների մասնակցությունն ապահովելու համար տրանսպորտային ծառայություն գնելու նպատակով հատկացվել է 25 000 ՀՀ դրամ:

-«Ուսուցչի օր» և «Գրադարանավարի օր» տոները նշվել է Սպիտակի մշակույթի տանը Թաթուլ Ալթունյանի անվան Հայաստանի երգի-պարի պետական համույթի մասնակցությամբ՝ ծախսվել է 438 000 ՀՀ դրամ (ձեռք է բերվել համերգային ծրագիր և ծաղիկներ):

«Բերքի տոն» միջոցառմանը մասնակցելու նպատակով բյուջեով նախատեսվել է և ծախսվել է 50.0 հազ.դրամ:

1988թ. Սպիտակի երկրաշարժի 31-րդ տարելիցի կապակցությամբ երկրաշարժի զոհերի հուշարձանին կատարված պսակադրության և ծաղիկների խոնարհման արարողության համար ծաղկեպսակներ և ծաղիկներ ձեռք բերելու նպատակով հատկացվել է 110 000 ՀՀ դրամ:

Սպիտակ համայնքում Ամանորի կապակցությամբ կազմակերպվել են տոնական բազմապիսի միջոցառումներ:

Համայնքի բոլոր կրթօջախներում սովորող, մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի և գլխավոր տոնաձառի վառման արարողության ընթացքում ներկա երեխաների համար ձեռք են բերվել ամանորյա տոպրակներ: Ծրագիրն իրականացնելու համար հատկացվել է 476 900 ՀՀ դրամ:

Ամանորը և գլխավոր տոնաձառի բացման արարողությունը հանդիսավոր ու հիշարժան դարձնելու, քաղաքային հրապարակը և փողոցները տոնական տեսքի բերելու նպատակով ձեռք են բերվել տոնաձառի լույսեր և զարդարանքի այլ պարագաներ: Տոնը հագեցած և ուրախ դարձնելու համար կազմակերպվել է ամանորյա համերգային ծրագիր Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի հետ համագործակցությամբ: Միջոցառման ընթացքում երեխաներին ուրախացրել են նաև հեքիաթների հերոսները, ձմեռ պապը, ձյունանուշը: Միջոցառումը եզրափակվել է տոնական շքեղ հրավառությամբ: Ծախսվել է 3 108 400 ՀՀ դրամ:

### **Սպորտային միջոցառումներ**

-2019 թվականի հոկտեմբերի 12-ին Սպիտակի «Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցացիա» հասարակական կազմակերպությունում անցկացվող հաշմանդամ անձանց սեղանի թենիսի Սպիտակի առաջնությունում առաջին երեք պատվավոր տեղերը գրաված մարզիկների և մարզուհիների համար խրախուսական պարգևներ ձեռք բերելու նպատակով հատկացվել է 54 950 ՀՀ դրամ:

-2019թ. մայիսի 8-ին Երևանում կայացել է ֆուտբոլի Հայաստանի Հանրապետության գավաթի խաղարկության եզրափակիչ մրցամարտը Վանաձորի «Լոռի» և Երևանի «Ալաշկերտ» թիմերի միջև:

Համայնքի մի խումբ պատանի ֆուտբոլիստների և ֆուտբոլասերների խնդրանքով հանդիպմանը ներկա լինելու և «Լոռի» ֆուտբոլային ակումբին աջակցելու նպատակով տրանսպորտային միջոց ձեռք բերելու համար ծախսվել 45 000 ՀՀ դրամ:

-2019թ. ԼՂՀ և Երևանում անցկացված համահայկական ամառային 7-րդ խաղերին մասնակցել են Սպիտակ համայնքի մարզիկներն ու պատվիրակությանը /31անձ/, որի համար ծախսվել՝ 2 135, 5 հազ դրամ /մարզական հագուստ, կոշիկ, տրանսպորտ, կեցության և այլ ծախսեր/:

2019թ.-ին համայնքում կազմակերպվել են «Հանրակրթական դպրոցների 1-ինից 3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող սպորտլանդիա», «Մարզական փառատոն», Շախմատի Սպիտակի բաց առաջնություն, հաշմանդամություն ունեցող մարզիկների սեղանի թենիսի բաց առաջնություն և Սպիտակի օրվան նվիրված մարզական միջոցառումները, մասնակիցները պարգևատրվել են պատվոգրերով:

Իսպանիայի Էսիխոն քաղաքում կայացած «Սամբո» ըմբշամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնությունում մեր համաքաղաքացի, Սպիտակի համալիր մանկապատանեկան մարզադպրոցի մարզիչ, Եվրոպայի և աշխարհի երիտասարդական առաջնությունների բազմակի մրցանակակիր Ռաֆիկ Մանուկյանը 68կգ քաշային կարգում գրավել է 3-րդ պատվավոր տեղը և արժանացել բրոնզե մեդալի: Հեղինակավոր այդ ստուգատեսում մեր երկրի պատիվը հերթական անգամ բարձր պահելու, ինչպես նաև մարզաշխարհում ձեռք բերած նշանակալի հաջողությունների համար միջազգային կարգի սպորտի վարպետ Ռաֆիկ Մանուկյանը պարգևատրել է 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամով:

Համայնքի լավագույն 4 մարզիկների միջազգային առաջնություններին/2/ մասնակցությանը աջակցելու նպատակով հատկացվել է 1 080.0 հազ. դրամը

-2019թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 3-ը Սպիտակի մանկապատանեկան համալիր մարզադպրոցում անց է կացվել համայնքի տղաների և աղջիկների շախմատի առաջնություն՝ տարիքային երեք խմբերով: Մրցանակային տեղեր գրաված մարզիկ-մարզուիկներին համապատասխան կարգի մեդալներով ու հավաստագրերով պարգևատրելու նպատակով հատկացվել է 25 000 ՀՀ դրամ:

«Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ, աշխատակիցների թիվը 15, որից 2-ը թանգարանային բաժնում:



Գրադարանի գործունեությունն ապահովելու համար համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրով նախատեսվել է 16 100.0 հազ. դրամ, 2019թ համայնքի բյուջեով՝ 16 495.8 հազ. դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 14 987,0 հազար դրամ, որից

- աշխատավարձ՝ 13 692.0 հազ. դրամ,
- էլեկտրաէներգիայի վարձավճար – 472.9 հազ. դրամ,
- կոմունալ ծառայությունների վճար – 344.0 հազ. դրամ
- այլ ծախսեր 478.1 հազ.դրամ

Տնտեսվել է 1 508.8 հազ.դրամ:

2019թ. գրադարանի գրքերի թիվը աճել է 577 օրինակով: Ընթերցողների թիվը կազմում է 2 318, գրքատացքը 33 276, հաճախումների թիվը 23 623, գրքային հավաքածուն կազմում է 30 221 օրինակ, բնակչության գրքապահովածությունը 13.0%, միջին հաճախումը 10.1%, միջին ընթերցանությունը 14.3%:

Թանգարանային առարկաների թիվը համալրվել է 29 միավորով և կազմում է 236, թանգարանի այցելուների թիվը կազմում է 3 262: 2019թ-ին գրադարանի թանգարանային բաժինը նվիրատվությամբ ստացել է ֆոտոնկարներ լուսանկարիչ, միջազգային մշակույթի ակադեմիայի անդամ, «ՌոսՖոտո» ստեղծագործական ակումբի անդամ, «[PhotoPodium.com](http://PhotoPodium.com)» կորպորացիայի ադմինիստրատոր Եվգենիյ Վլադիմիրի Ժիլյակից: Գրադարանում նշվել է Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150- ամյակը, Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 100- ամյակը, Պարույր Սևակի ծննդյան 95- ամյակը, Օ. Բալզակի ծննդյան 220- ամյակը, Ալ. Բակունցի ծննդյան 120- ամյակը, Ստ. Զորյանի ծննդյան 130-ամյակը, Մուրացանի ծննդյան 165-ամյակը, Լ. Շանթի ծննդյան 160-ամյակը և այլն:

2019թ-ի նշանակալի ձեռքբերումներից է ամերիկյան դեսպանատան օժանդակությամբ գրադարանի վեբ կայքի ([Spitak.reblik.am](http://Spitak.reblik.am)) գործարկումը, որի ֆինանսավորման խնդիրները 2 տարի ժամանակով իր վրա է վերցրել դեսպանատունը:

«Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի շրջանակում իրականացված նշանակալի միջոցառումների, ինչպես նաև մշակութային ժառանգության հանրահոջակման ոլորտում ունեցած ավանդի համար 2019թ-ին «Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ-ը խրախուսվել է ՀՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության շնորհակալագրով:

Քաղաքային գրադարանը հայրենասիրական դաստիարակության, ազգային ոգու և մշակութային արժեքների պահպանման նպատակով սերտորեն համագործակցել է քաղաքի

հանրակրթական բոլոր դպրոցների, Սպիտակի պետական քոլեջի, Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, մանկապարտեզների և տարբեր հասարակական կազմակերպությունների հետ:

### **Սոցիալական պաշտպանություն**

Սոցիալական պաշտպանությանն ուղղված 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրով 2019թ.-ի համար նախատեսված է 5 825.5 հազ. դրամ, իսկ 2019 թվականի համայնքի բյուջեով նախատեսվել է 5 428.5 հազ.դրամ, որից կատարվել է 2 800.0 հազ դրամի սոցիալական աջակցություն: 2019թ. Սպիտակ համայնքի բյուջեից 249.0 հազ. դրամ հատկացվել է Սպիտակի «Խնամքի տուն» հկ-ին: 2019թ ընթացքում սոցիալապես խոցելի անձանց /հաշմանդամներ, տարեցներ, ՀՄՊ մասնակիցներ և այլն/ հատկացվել է 2 379.5 հազ. դրամ: 2019թ. ծախսերի կատարողականը կազմել է՝ 93.2 %:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի հետ համատեղ իրականացվող Սպիտակ համայնքի սոցիալապես անապահով տարեցների, հաշմանդամների և այլ անապահով խավերի առաջնային սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրին (սնունդ, բուժօգնություն, իրավական և այլ խորհրդատվություններ) ներդրվել է 2 800.0 հազար դրամ: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 10 800.0 հազար դրամ: Այդ ծառայությունից օգտվել են թվով 91 սոցիալապես անապահով անձինք: Շարունակվում է ակտիվ համագործակցությունը «Կամրջակ» ՍԲՀԿ-ի հետ: Սպիտակի համայնքապետարանի և “Կամրջակ” սոցիալ բարեգործական հասարակական կազմակերպության համագործակցության արդյունքում 2019թ. ընթացքում համայնքի սոցիալապես անապահով 342 ընտանիքի տրամադրվել է սննդօգնություն, 122 1-ից 4-րդ դասարանի երեխաների կոշիկ, գրեմական պիտույքներ, 95 դպրոցականի ձմեռային կոշիկ, սպորտային հագուստ:

Դրամական աջակցություն է տրամադրվել կյանքի դվժարին իրավիճակներում հայտնված 59 անապահովներին՝ 1 333 000 ՀՀ դրամ, 37 անապահովի տրամադրվել է վառելափայտ:

6 հիվանդների ամեն ամիս հատկացվել է դեղորայք:

Տնայցերի կազմակերպման և ուսումնասիրությունների միջոցով հայտնաբերված կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց անհրաժեշտ սոցիալական աջակցության տրամադրումը իրականացվել է աջակցող ցանցի մասնակիցների փոխգործակցության և համատեղ գործունեության հիման վրա: Արդյունքում հստակեցվել է տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և բարելավվել ծառայության մատչելիությունը:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,  
Հեռ: (0-255) 2-25-00, Փաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» փետրվարի 2020թ. N<sup>o</sup> 13-Ա

**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ**  
**ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ**  
**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, քննարկելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզապետարանի կողմից Սպիտակ համայնքում 2019 թվականին իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները, հսկողության արդյունքում արձանագրված թերությունները, խախտումները և դրանց վերաբերյալ ձեռնարկված միջոցառումները՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**


1. Ընդունել ի գիտություն Սպիտակ համայնքում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզապետարանի կողմից իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունում նշված թերությունների, խախտումների և դրանց վերացման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումները՝ համաձայն հավելվածի:


ԿՈՂՄ (8)


ԴԵՄ(0)


ՁԵՆՆՊԱՀ(0)


ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՄՅԱՆ 


ՄԱՆԿԵԼ ԽՈՅԵՑՅԱՆ 


ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ 


ԼՈՒՍԻՆԵ ՄԱԹՈՍՅԱՆ 

ԿԱՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ 

ՄԿՐՏԻՉ ՇՈՒՇԱՆՅԱՆ 

ՀԱՄԼԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ 

ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 28

ք. Սպիտակ



ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի կողմից Սպիտակ համայնքում 2019 թվականի դեկտեմբերի 11-20-ը իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում արձանագրվել են հետևյալ թերությունները.

1. Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջը. Առկա չէ որոշում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին:

Ձեռնարկված միջոցառումները.  
Ընդունվել է ի գիտություն:

2. Չի պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի պահանջը. Հաստատված չէ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:

Ձեռնարկված միջոցառումները.  
Ընդունվել է ի գիտություն:

3. Չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը կայացնում է որոշումներ՝ համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ:

Ձեռնարկված միջոցառումները.

Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 70 որոշմամբ հաստատվել է Սպիտակ համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման: Ընթացքի մեջ է համայնքի ղեկավարի կողմից որոշում ընդունելու գործընթացը, և նախատեսվում է ճանապարհները կահավորել համապատասխան նշաններով 2020 և 2021 թվականների ընթացքում:

4. Ձեռնարկվում են որոշ միջոցներ սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ, սակայն կան հարկատուներ, որոնք խուսափում են վճարումները սահմանված կարգով և ժամկետներում իրականացնելուց, ինչի պատճառով առկա են խոշոր չափերի հասնող ապառքներ, կամ թերի է պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդված 1-ին մասի 3-րդ կետի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Ձեռնարկված միջոցառումները.

04.02.2020թ. Սպիտակ համայնքի ղեկավարի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ հանձնարարվել է ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին կազմակերպել տեղական հարկերի, տեղական տուրքերի և վճարների գանձումներն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

5. Հողի հարկի և գույքահարկի ծանուցագրերի ու անդորրագրերի հատկացման, հաշվառման և պահպանման գործընթացի կազմակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 29.05.2003թ.-ի թիվ 750-Ն որոշման հավելված N3-ով հաստատված կարգի 12-րդ կետերի որոշ պահանջներին ոչ համապատասխան, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմիններում վճարումներ համակարգողը՝ յուրաքանչյուր ամսվա արդյունքներով, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 5-ը վճարումներ ընդունողների հետ կազմում է երկկողմանի տեղեկանք ստացված, օգտագործված (խոտանված) անդորրագրերի մասին, յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով, մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը անդորրագրերի և ծանուցագրերի մուտքագրումը, գրանցումը և հատկացումն իրականացնող պատասխանատու անձի հետ կազմում է երկկողմանի ակտ՝ համայնքում համապատասխան ժամանակաշրջաններում ծանուցագրերի և անդորրագրերի քանակային շարժի (ստացված, օգտագործված, խոտանված, մնացորդ) մասին

Ձեռնարկված միջոցառումները.

04.02.2020թ. Սպիտակ համայնքի ղեկավարի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ հանձնարարվել է ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին վերացնել առկա թերությունները:

6. Որոշ դեպքերում տեղական տուրքերը գանձվում են ուշացումներով, կամ չի պահպանվում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի պահանջը: Հարկեր չվճարողների հետ տարվում են բացատրական աշխատանքներ, սակայն ոչ բոլոր դեպքերում է այն արդյունավետ: Մի շարք խոշոր պարտք ունեցողների գործեր ուղարկվել են դատարան՝ գումարները բռնագանձելու վերաբերյալ:

Ձեռնարկված միջոցառումները.

04.02.2020թ. Սպիտակ համայնքի ղեկավարի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ հանձնարարվել է ֆինանսական և եկամուտների հավաքագրաման բաժնին կազմակերպել տեղական հարկերի, տեղական տուրքերի և վճարների գանձումներն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

7. Թերի է պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարը հանրակրթական դպրոցի տնօրինության հետ պարտավոր է մասնակցություն ունենալ նախագորակոչային և գորակոչային պատրաստականության իրականացման գործընթացին:

Ձեռնարկված միջոցառումները.

Ընդունվել է ի գիտություն:

8. Թերի է պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 28.10.2010թ. թիվ 1477-Ն որոշմամբ սահմանված կարգը՝ համայնքի արտօգտագործողների հետ արտավայրերից օգտվելու պայմանագրեր չեն կնքվել:

Ձեռնարկված միջոցառումները.

Չի վերացվել: Արտավայրերի կահավորված չլինելու և արտավայրերը բնակավայրից հեռու գտնվելու պատճառով բնակիչները հրաժարվում են վարձակալության պայմանագրեր կնքելուց: Բացի այդ գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 14.04.2011թ. թիվ 389-Ն որոշմամբ սահմանված կարգը կիրառման համար մատչելի չէ:

9. Թերի է պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետը՝ հողային հաշվեկշռի տեքստային մասը բացակայում է:

Ձեռնարկված միջոցառումները.

Հողային հաշվեկշռի տեքստային մասը կազմված է:

10. Թերի է պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետը՝ հողերի հաշվառման գրքերում հաստատված տվյալները լրացված չեն:

Ձեռնարկված միջոցառումները.

Աշխատանքներն ընթացքի մեջ են:

11. Թերի է պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ.հոկտեմբերի 4-ի N 1161-Ն որոշման հավելված 1-ի 2 կետի առաջին ենթակետի պահանջը՝ համաձայն որի. սպառման թափոնների հեռացում՝ առնվազն երեք օրը մեկ անգամ, իսկ +50C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ամեն օր:

Ձեռնարկված միջոցառումները.

Աղբահանության աշխատանքները իրականացվում են համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 67 որոշմամբ հաստատված գրաֆիկի համաձայն:

12. Թերի է պահպանվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմերի 2 կետի 11 և 12-րդ ենթակետերի պահանջները՝ համաձայն որի, կոնտեյներները ունենում են կափարիչներ և աղբով լցվում են ծավալի երկու երրորդից ոչ ավելի մակարդակով: Կոնտեյներները հեշտությամբ նույնականացվում են և պարունակում են աղբահանության ընկերության հասցեն կամ անվանումը կամ ծածկագիրը: Կոնտեյներները ունենում են մաքրման և ախտահանման ենթակա հարթ մակերեսներ»:

Ձեռնարկված միջոցառումները.

Չի վերացվել:

13. Չի պահպանվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմերի 2-րդ կետի 18,19 և 22 ենթակետերի պահանջները՝ համաձայն որի, շենքերի աղբամուղները և աղբահավաք խցերը, կոնտեյներները լվացվում և ախտահանվում են (18 կետում նշված վարակազերծիչ լուծույթներով) ամիսը 1 անգամ՝ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից: Կոնտեյներների լվացումը և ախտահանումը իրականացվում է աղբավայրում, հատուկ հատկացված վայրում կամ համապատասխան պայմանների (ջրամատակարարման և ջրահեռացման պայմաններ) առկայության դեպքում՝ աղբահավաք խցում: Աղբանոթները ունենում են մաքրման և ախտահանման ենթակա հարթ մակերեսներ և տեղափոխման համար ապամոնտաժման հնարավորություն:

Ձեռնարկված միջոցառումները.

Ներառված է 2020 թվականի աղբահանության մրցույթի տեխնիկական բնութագրում, համայնքապետարանը սահմանված կարգով հետևողական է լինելու մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության կողմից աշխատանքների կատարմանը:

14. Թերի է պահպանվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմերի 3-րդ կետի 26-րդ ենթակետի պահանջները՝ համաձայն որի, բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրումը իրականացվում է առնվազն երկու օրը մեկ անգամ:

Ձեռնարկված միջոցառումները.

Չի վերացվել: Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրումը իրականացվում է բնակիչների կողմից, և գտնվում են մաքուր վիճակում: Բացի այդ պարտադիր նորմերի համար



պահպանման տեղական վճարը դժվարությամբ է հավաքագրվում (փակ դռների պատճառով), հավաքագրված գումարը բավականացնում է միայն վթարային և անհետաձգելի աշխատանքների իրականացմանը:

15. Չի պահպանվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմերի 3-րդ կետի 26-րդ ենթակետի պահանջները՝ համաձայն որի, բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների, աղբամուղի ու աղբահավաք խցերի դեզինսեկցիայի (պայքար միջատների դեմ) և դեռատիզացիայի (պայքար կրծողների դեմ) աշխատանքները իրականացվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

Ձեռնարկված միջոցառումները.

Հանձնարարվել է համայնքը սպասարկող անասնաբույժին անհրաժեշտության դեպքում կատարել դեզինսեկցիայի և դեռատիզացիայի աշխատանքներ:

16. Թերի է պահպանվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմեր 3-րդ կետի 24 ենթակետի պահանջները համաձայն որի շենքերի բակերը, միջբակային տարածքները, փողոցները, ճանապարհները, հրապարակները, զբոսայգիները, պուրակները ենթարկում են սանիտարական մաքրման, իսկ ամռան ամիսներին փողոցները ենթակա են նաև ջրման: Բնակավայրերը պահվում են պատշաճ սանիտարական վիճակում՝ սպառման թափոններից, շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող աղբից, կենցաղային ավելորդ իրերից, փոշու կուտակումներից զերծ:

Ձեռնարկված միջոցառումները.

Համայնքում իրականացվում են ամենօրյա սանիտարական մաքրման աշխատանքներ համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 67 որոշմամբ հաստատված սխեմայի:

17. Թերի է պահպանվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմեր 2-րդ կետի 13 և 14 ենթակետերի պահանջները համաձայն որի սպառման թափոնները փոխադրում են աղբատար փոխադրամիջոցներով, որոնց կառուցվածքը բացառում է (փակ թափքերով) շրջակա միջավայրի աղտոտումը: Աղբատար փոխադրամիջոցները հեշտությամբ նույնականացվում և պարունակում են աղբահանության ընկերության հասցեն կամ անվանումը կամ ծածկագիրը:

Աղբատար փոխադրամիջոցի կառուցվածքը ապահովում է աղբի խտացումը, ունենում է աղբաջրերը հավաքող համակարգ կողքից կամ հետնամասում կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք և/կամ կոնտեյներները լվանալու համակարգ:

Ձեռնարկված միջոցառումները.

Աղբահանությունն իրականացնող կազմակերպությանը հանձնարարվել է վերացնել թերությունները:

18. Չի պահպանվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմեր պահանջը, համաձայն որի՝ Կոնտեյներները տեղադրում են բնակելի և հասարակական շենքերի բակային կամ միջբակային տարածքներում՝ փոխադրամիջոցի մոտեցման համար հարմար դիրքով, ջրանթափանց, հարթ, բարեկարգ մակերեսով հարթակների վրա: Հարթակը երեք կողմից ունենում է պատնեշ կամ մետաղյա դեկորատիվ ցանկապատ: Կոնտեյներները չեն տեղադրում փողոցների մայթերի և սիզամարգերի վրա:

Ձեռնարկված միջոցառումները.

2020 թվականի ընթացքում նախատեսվում է որոշ կոնտեյներների համար կառուցել հարթակներ և պատնեշներ:

19. Չի պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ.օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման հավելվածի 37-րդ կետի պահանջները՝ համաձայն որի տարահանման հանձնաժողովները նախօրոք պլանավորում են բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման, տարահանված բնակչության ընդունման, տեղաբաշխման, առաջնահերթ կենսաապահովման, նյութական ու մշակութային արժեքների տարահանման, ընդունման և հատուկ շենքերում ու շինություններում պահպանման հանձնման միջոցառումները:

Ձեռնարկված միջոցառումները.

Ընթացքի մեջ են:

20. Չի պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N 824-Ն որոշման պահանջները:

Ձեռնարկված միջոցառումները.

Ընթացքի մեջ է:

21. Չի պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. ապրիլի 10-ի N 384-Ն որոշման հավելվածի 4-րդ և 5-րդ կետերի պահանջները՝ համաձայն որոնց.

«4. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում ստեղծվում են քաղաքացիական պաշտպանության հետևյալ ծառայությունները՝

- ա) կապի,
- բ) ինժեներական,
- գ) բժշկական,

- դ) տրանսպորտային,
- ե) առևտրի և սննդի,
- զ) էներգետիկայի,
- է) բույսերի և կենդանիների պաշտպանության,
- ը) հասարակական կարգի պահպանման,
- թ) նյութատեխնիկական մատակարարման,
- ժ) կոմունալ-տեխնիկական,
- ժա) բնակչության հատուկ սպասարկումների:

Պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններում և կազմակերպություններում ստեղծվող՝ նշված ծառայությունների տեսակները որոշվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից՝ ելնելով դրանց խնդիրներից և գործունեության առանձնահատկություններից:

5. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունները դասակարգվում են՝

- ա) հանրապետականի,
- բ) մարզայինի,
- գ) համայնքայինի,
- դ) օբյեկտայինի:

Քաղաքացիական պաշտպանության հանրապետական ծառայությունն ստեղծվում է տվյալ բնագավառի համապատասխան լիազորված պետական մարմնում՝ ներգրավելով ոլորտում գործող կազմակերպությունները (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից):

Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայություններն ստեղծվում են համապատասխան մարզպետարանների և պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումներում՝ ներգրավելով տվյալ ծառայություններ մատուցող կազմակերպությունները (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) կամ դրանց մարզում գործող ստորաբաժանումները:

Քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայություններն ստեղծվում են համայնքապետարաններում և պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային համապատասխան ստորաբաժանումներում, ինչպես նաև տարբեր ծառայություններ մատուցող կազմակերպությունների (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) կամ դրանց համայնքում գործող ստորաբաժանումներում:

Քաղաքացիական պաշտպանության օբյեկտային ծառայություններն ստեղծվում են կազմակերպություններում»:

Ձեռնարկված միջոցառումները.

Ստեղծված են:

22. Համայնքի վարչական տարածքում առկա են աղբակուտակման վայրեր:

Ձեռնարկված միջոցառումները.

Վերացվել են:

23. Բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքները ոչ բոլոր երեխաների անձնական գործերում են առկա:

Ձեռնարկված միջոցառումները.

04.02.2020թ. Սպիտակ համայնքի ղեկավարի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ հանձնարարվել է ՆՈՒՀ-երի տնօրեններին բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքը կցել կցել անձնական գործին:

24. Ձեռն պահպանվել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 24.01.2018թ թիվ 7-Ա/1 հրամանի պահանջները:

Ձեռնարկված միջոցառումները.

Ընդունվել է ի գիտություն: Նախագահի «Լավագույն քաղաքային մարզական համայնք», «Լավագույն գյուղական մարզական համայնք», «Լավագույն մարզական բակ» մրցանակների համար անցկացվող համանուն ստուգատեսներին Սպիտակ համայնքը մասնակցելու հայտ չի ներկայացրել առաջադրված որոշակի չափորոշիչներին չհամապատասխանելու պատճառով:

25. Ձեռն պահպանվել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 25.04.2019թ թիվ 74-Ա/1 հրամանի պահանջները:

Ձեռնարկված միջոցառումները.

Ընդունվել է ի գիտություն: Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին Սպիտակ համայնքը մինչև 2017թ. ներառյալ մասնակցել և բազմիցս հասել է հանրապետական փուլին: 2018-2019թթ. Սպիտակ համայնքը մրցույթին չի մասնակցել մասնակիցների կողմից հայտեր չներկայացնելու պատճառով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ա. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,  
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» փետրվարի 2020թ. № 14-Ա

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ  
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՅՑ ԿԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ  
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող ԳԱՁ 53-12 ԿՕ-503Բ մակնիշի (պետհամարանիշ՝ 681 LL 36) տրանսպորտային միջոցը մինչ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, առանց մրցույթի, փողոցների սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերման մրցույթում հաղթող ճանաչված անձին վարձակալությամբ տրամադրելուն:

2. Վարձակալության վճարի չափը սահմանել ամսական 30 000 ՀՀ դրամ:

ԿՈՂՄ (8)

ԴԵՄ(0)

ՁԵՌՆՊԱՀ(0)

ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՄՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ԽՈՅԵՅՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՄԱԹՈՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԻԻԹԱՐՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ՇՈՒՇԱՆՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. փետրվարի 28

ք. Սպիտակ

